



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:


Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Արմին Վեգները եւ
Էրնստ Վերները
Հայոց Ցեղասպանության մասին



Ազգային Հարցի եւ Գեներալի Ուսումնասիրման Կենտրոն

**Արմին Աեզները եւ Էրնատ Վերները Հայոց Ցեղասպանության մասին
Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն
Երեւան, 1996**

Գրքույկը ներկայացնում է գերմանացի մեծ մարդասեր Արմին Աեզների Բոսց նամակը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին տնապատ տեղափոխելու մասին եւ Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Էրնատ Վերների «1915-1916 թվականներին հայկական սարսափներն արդյո՞ք հայկական ենարտեր են» աշխատությունը, որանք հայերեն լեզվով ամբողջականորեն ներկայացվում են առաջին անգամ:
Նախատեսված է մասնագետների եւ ընդերցող լայն շրջանակների համար:

**Թարգմանությունը գերմաներենից եւ
առաջաբանները՝ պատմագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի:**

**Խմբագիր՝ Դավիթ Պետրոսյան
Համակարգչային շարվածք եւ ձեւավորում՝ Մարինե Աղեկյանի**

Տպագրվել է ԱՀԳՈՒԿ-ում:

© Ստեփան Ստեփանյան, 1996

© Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն, 1996

Բոլոր իրավունքները վերապահված են: Սույն գրքույկի բովանդակության վերարտադրումը, ոչ շահադիտական նկատառումներով, մասամբ կամ ամբողջությամբ թույլատրվում է՝ պայմանով, որ նշվեն հեղինակը կամ թարգմանիչը (ըստ պարագայի) եւ երատարակիչը:

**ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ,
ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐ
ԱՐՄԻՆ ՎԵՔՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ ԲԱՅ ՆԱՄԱԿԸ
ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻՍՈՆԻՆ**

Գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, հումանիստ, խաղաղության պայքարի մարտիկ Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Վուպերտալ-Էլբերֆելդում: Ուսանել է Բեռլինի, Բրեսլաուի եւ Ցյուրիխի համալսարաններում: Բազմաթուվանդակ է եղել նրա գործունեությունը: Տակավին պատանի՝ հաստատակամորեն վճռում է պաշտպան կանգնել ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքներին: Երբ «Բեռլիներ Ցայթունգ»-ում կարդում է «Գազանային հաշվեհարդար հայերի հետ Թուրքիայում» հոդվածը, նրա մեջ ձեւավորվում է հայապաշտպան գործունեության անհրաժեշտությունը, որը դրսևորվում է հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին: Այդ ժամանակ Ա.Վեգները աշխատում է Թուրքիայում՝ գերմանական ռազմական միսիայի սանիտարական ծառայությունում: 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին շրջագայում է գրեթե ամբողջ Փոքր Ասիայում, լինում նաև Հալեպում, Բաղդադում, Տեր-Չորում (արաբերեն՝ Դեր-Է-Չոր), ականատես է դառնում արեւմտահայության սարսափելի կոտորածներին: Այնուհետև, աշխատելով ֆելդմարշալ Ֆոն դեր Գուլցի շտաբում, տեսնում է անապատներ տեղահանված հայերի հանդեպ կատարվող ոճրագործությունները: Նա հանդիպում ու զրուցում է բազմաթիվ հայերի եւ քուրքերի հետ, որոնց հաղորդած զարհուրելի փաստերը օգտագործում է իր մի

շարք հրապարակումներում:

Ականատես լինելով երիտթուրքական իշխանությունների կողմից մահվան ճամբարներում կազմակերպված հայերի բարբարոսական խոշտանգումներին, Ա.Վեզները լուսանկարում է այդ եղերական տեսարանները, դրանք որպես հավաստի վավերագրեր պատմության դատաստանին հանձնելու համար: Թուրքական իշխանությունները բռնագրավում են նրա ավելի քան 2000-ի հասնող մեղադրական լուսանկարների մեծ մասը: Ա.Վեզներին հաջողվում է փրկել դրանց որոշ մասը եւ ցուցադրել Գերմանիայում՝ իր հրապարակային ելույթներում եւ հասարակական վայրերում: Հայոց Մեծ Եղեռնի մասին գրում ու հրապարակում է մի շարք պատմվածքներ, բազմաթիվ հոդվածներ:

Նրա կյանքում հուզիչ իրադարձություն հանդիսացավ Հայաստան կատարած այցը: Մինչեւ Հայաստան գալը, 1927 թ. Վեզները եւ նրա կինը՝ Լույա Լանդաուն, որպես առաջադեմ գրողներ հրավիրվում են Մոսկվա՝ մասնակցելու Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի հանդեսին: Նույն թվականին, Ա.Տեր-Գաբրիելյանի հրավերով ժամանում է Երևան, որպես հյուրընկալի Հայաստանի պատվավոր հյուր: Հանրապետությունում նա մնաց շուրջ երկու ամիս, ծանոթացավ վերածնվող Հայաստանին, նյութեր հավաքեց հայերի մասին՝ վեպ գրելու համար:

Հայաստան կատարած իր առաջին այցելության մասին նա հակիրճ գրել է. «Եկա Հայաստան՝ ակնատես լինելու մի ժողովրդի հարությանը, այո, հարությանը: Տեսա, թե ինչպես ժողովուրդը իր դագաղի կափարիչը բանալով՝ դուրս է եկել գերեզմանից, բզկտված հագուստներով ու նվազած ուժով, սակայն մաքառում է երկիր ստեղծելու համար: Ես տեսա հարության հրաշքը իր ամբողջ շքեղությամբ: Կարծես սա այն Հայաստանը չէ, նոր, բոլորովին նոր երկիր, իր նոր մայրաքաղաքով»:¹

Վերադառնալով հայրենիք, նա դժվարին ու ծանր ժամանակներ ապրեց: 1933 թ. օգոստոսին ձերբակալվում է

գեստապոլի կողմից: Պատճառը՝ Ա.Հիտլերի դեմ բուռն գայությունով գրած «Բաց նամակն» էր: Նրանում մատնանշվում էր, որ եթե վերջ չտրվի հակահրեական հալածանքներին, կպղծվի գերմանական մշակույթը, որի զարգացմանը նպաստել են հրեա գիտնականները, գրողները, արվեստագետներն ու փիլիսոփաները: Նա սարսափելի տանջանքների ու խոշտանգումների է ենթարկվում, բանտից բանտ է նետվում, ճամբարից ճամբար ընկնում: Դիմելով փախուստի, հայտնվում է Անգլիայում, ապա մեկնում է Շվեյցարիա, Մերձավոր Արեւելք եւ վերջապես հանգրվանում է Իտալիայում ու մինչեւ իր կյանքի վերջն ապրում եւ ստեղծագործում Հռոմում:

Վերստին Հայաստան այցելեց 1968 թ. սեպտեմբերին: 82 տարեկան Ա.Վեզներն իր կնոջ՝ Իրենե Կովալիսկայի հետ եղավ 2750 տարեկան Երևանում: Վերիիշելով եւ պատմելով Հայոց ցեղասպանության՝ դարի առաջին մեծ ողբերգության մասին, նա մանկան պես զվարճանում էր՝ տեսնելով հնադարյան Երեւանի նորակառույցները: Նրան ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը եւ հայասնպաստ մեծ գործունեության համար պարգևատրեց Ս.Գրիգոր Լուսավորչի շքանշանով:

Ա.Վեզները բարձրացավ Ծիծեռնակաբերդ եւ Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դրեց: Նա այցելեց Մատենադարան, դասախոսություններ կարդաց Արտասահմանի հետ մշակութային կապի եւ բարեկամության հայկական ընկերության դահլիճում, ցուցադրեց հայերի կոտորածները պատկերող մի շարք լուսանկարներ: Հիացած էր գեղատեսիլ Երեւանի կառույցներով, գիտական ու մշակութային օջախներով, վերածնված ժողովրդի հաջողություններով:

1968 թ. սեպտեմբերի 20-ին Ա.Վեզները հանդիպում ունեցավ Երեւանի պետական համալսարանի կոլեկտիվի հետ: Ահա թե ինչ է գրում այդ հանդիպման մասին «Երեւանի համալսարան» թերթը. «Մթազնում էր նրա դեմքը, երբ խոսում էր հայկական կոտորածներից ու հրճվում էր, որ իր առաջ ծիփում, ծավալվում էր նոր Երեւանը, ուր խայտում է կյանքը: Նա պատմեց, թե ինչպես գերմանական իշխանությունները ձերբակալել են իրեն, որպեսզի խեղդեն՝ հանուն հայերի, հանուն

¹ «Արմին Վեզների ծայր», «Լրաբեր» (ԱՄՆ), 31 հունվարի, 1970 թ.:

արդարության իր գորեղ ձայնը»¹

Նա պատմել է, թե ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հանդես է եկել ի պաշտպանություն հրեաների, վճռականորեն դատապարտել է այդ ժողովրդի դեմ իրագործված հարստանքներն ու հետապնդումները և, դարձյալ ձեռքով փակելով, ֆաշիստական գնդան է նետվել: Իսրայելում կա մի անտառ, ուր մի մեծ ծառի վրա փակցված է մեծ ու արդար մարդու յուսակարր: Այդ ծառը կոչվում է «Վեզների արդարության ծառ»:

Հանդիպման ժամանակ երախտագիտության խոսք է ասել ակադեմիկոս Կ.Սելիք-Օհանջանյանը. «Սիրելի Վեզներ, հայ ժողովուրդը երախտապարտ է Ձեզ: Ձեր նկատմամբ տաժաժ հարգանքն էր պատճառը, որ նա այդքան ջերմորեն ընդունեց Ձեզ: Հայերը սիրում են, երբ իրենց երկիրն են գալիս բարեկամները: Իսկ Դուք, մեծապատիվ Արմին, հայության վշտի հետ քայլեցիք տասնյակ տարիներ և դարձաք մեր փորձված բարեկամը: Ընդհակառակը Ձեզ, հայության դատի անխոնջ ու անկաշառ պաշտպան, մեզ համար չհնացած բարեկամ, մեզ համար հայացած Արմեն Վեզներ»²

Հայաստան կատարած երկրորդ, սակայն վերջին այցի կապակցությամբ Ա.Վեզներն ասել է. «Ես, որ տեսել եմ այս ժողովրդի ցարդերը, ես, որ ծայնս բարձրացրել եմ հանուն այս ժողովրդի և տևանելով աշխարհի բար սրտի պասպանով, անիծում էի ամբողջ աշխարհին, եկա, տեսա վերածնված հայ ժողովրդին, բարձրացա Ծիծեռնակաբերդ, ծնկի եկա անգերեզման հայերի հավիտենական կոթողի առջև ու խոնարհվեցի նահատակների հոգին խորհրդանշող քանար կրակի առջև:

Տողանցեցին, տողանցեցին աչքերիս առաջ անապատի քեմերը, անապատի վրանները, անապատի սոփահար մանուկները, անապատում համաճարակի գոհերը: Քչերը կարող են հասկանալ իմ ապրումները: Միայն նրանք կարող են չափել այս հրաշքի մեծությունը, որոնց աչքերի մեջ, ինչպես իմ աչքերի

մեջ պարզված են անապատի քստմեցնող պատկերները: Այս Երեւանի արժեքը եւ իմաստը կըմբռնեն նրանք, ովքեր անցել են Տեր Չորի եւ Մեսքենեի անապատներով:

Այստեղ հայությունը փրկված է վերջնականապես, մեկընդմիջաւ: Երբ դիմացն Արարատն է եւ Ծիծեռնակաբերդի վրա անցյալը հիշեցնող մշտավառ բոցը, հայն այստեղ է եւ իր ճակատագրի տերն է»¹

Իր խոսքի վերջում Ա.Վեզներն անդրադառնում է սփյուռքահայության պահպանման հրատապ խնդրին, կոչ անում «Փրկել Արեւմուտքի մեջ հետգիտես ձուլվող հայության բեկորները...»²

Ա.Վեզների փաստագրական հարուստ ժառանգության մեջ մեծ տեղ են զբաղում նրա վկայությունները Հայոց ցեղասպանության մասին: Դրանց պատմագրական արժեքը ամենից առաջ այն է, որ հեղինակը կենդանի վկա է եղել արեւմտահայության նկատմամբ բուրբական իշխանությունների կատարած ոճրագործություններին, տեսել է հայոց մեծագույն ողբերգությունը եւ իր անաչառ զրչին է հանձնել պատմության համար մեծ դաս հանդիսացող մի շարք աշխատություններ:

Տողերիս հեղինակը 1970 թ. օգոստոսի 17-ին նամակ է հղել Ա.Վեզներին: Քանի որ երկար ժամանակ աշխատել էի գերմանական արխիվներում ու զրադարաններում եւ հայտնաբերված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ստեղծել էի մենագրություն Հայկական հարցի, հայերի ցեղասպանության մասին, ուստի խնդրում էի նրան ընթերցել այն, հնարավորության սահմաններում տրամադրել իր ունեցած վավերագրերը եւ իր խոսքն ու կարծիքը շարադրել այդ գրքում որպէս առաջարան: Նամակիս պատասխանը չուշացավ. այն ժամանակ 84-ամյա, սակայն իրեն յուրահատուկ պայծառությամբ, լավատեսությամբ ու բարեխղճությամբ հիանալի մտածողը, հայ ժողովրդի մեծ բարեկամը թղթին էր հանձնել իր բովանդակալից գրությունը: Որոշակի հետաքրքրություն ներկայացնող այդ նամակից բերում ենք մի

¹ «Երեւանի համալսարան», 27 սեպտեմբերի, 1968 թ.:

² Նույն տեղում:

¹ «Արմին Վեզների ձայնը», «Լրաբեր» (ԱՄՆ), 31 հունվարի, 1970 թ.:

² Նույն տեղում:

հատված.

«Միրելի պրն Ստեփանյան, երեկ միայն ստացա Երեւանից ուղարկված Ձեր նամակը, եւ քանի որ Դուք չէիք գրել ամսաթիվը, փոստային կնիքից իմացա, որ այն ուղարկել էք 17.8.1970 թ.:

Արտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ հատկապես Հայաստանին նվիրված իմ երկարատև գործունեության նկատմամբ այդքան մեծ ուշադրության համար: Մեծ հաճությամբ կաշխատեմ ձեռք բերել Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը եւ ընդհանրապես կցանկանայի օգտակար լինել Ձեզ: Ես խնդրում եմ Ձեզ որոշ ժամանակ սպասել. քանի որ այժմ քարտուղարուհի չունեմ, այդ հարցը կլուծվի հոկտեմբերին: Մեզ մոտ այժմ շատ շոգ է, այդ պատճառով էլ արձակուրդները տեւում են մինչեւ սեպտեմբերի վերջը: Վաղուց չէ, որ վերադարձել եմ Հոռն, ուստի բավականին շատ աշխատանք է կուտակվել:

Այնուամենայնիվ, կարող եմ հայտնել, որ գերմաներեն լեզվով բազմաթիվ գործեր գտնվում են Երեւանում: Ես դրանք նվիրել եմ հայ ժողովրդին՝ հանձնելով Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերությանը, որից հետո դրանք պետք է հանձնվեին Երեւան քաղաքի պետական գրադարանի տնօրինությանը: Հիշողությամբ րվարկում եմ իմ հետևյալ տպագիր եւ ձեռագիր փաստաթղթերը:

1. Հայ ժողովրդի տեղահանության վերաբերյալ 1919 թ. ԱՄՆ-ի նախագահին ուղարկված իմ բաց նամակը. ես այն գրել եմ որպես կենդանի վկա անապատներ տեղահանված հայ ժողովրդի տառապանքների, այն բոլորի, ինչը անձամբ տեսել եմ Սիրիական անապատներում: «Բեռլինյան օրաթերթ»-ում հրատարակված այդ նամակը Փարիզյան բանակցությունների ժամանակ պետք է անձամբ հանձնել ամերիկյան նախագահին: Դրանից հետո այն լույս տեսավ գերմաներեն:

2. «Ճիշ Արարատից», հրատարակվել է պացիֆիստ Հելեն Շայոկերի կողմից 1922 թ «Նոր սերունդ» ամսագրում:

3. «Կրակե գունդ» վերնագրով իմ հոդվածը, որը սկսվում է հետևյալ բառերով. «Երբ հետ ես նայում, ամեն ինչ վերակենդանանում է»: Այնտեղ նկարագրված են իմ կրած ապրումները՝ հայերի նկատմամբ Արդուլ Համիդի կատարած

ոճրագործությունների ժամանակ: 1895-96 թթ. այնպիսի տպավորություն են գործել իմ վրա, որ ես երբեք չեմ մոռանա:

4. «Հինգ մասունք քո վրա», գրված 1928 թվականին: Այն լույս է տեսել Շտուտգարտում 1929-ին կամ 1930 թվականին: Այնտեղ նկարագրված է 1927-28 թվականների ժմուհու Հայաստան կատարած իմ այցելությունները: Բացահայտված են Գերմանիայի Կոմունիստական Կուսակցության շարքերն ընդունվելու իմ դրդապատճառները:

5. «Թալեաք փաշայի դատավարության» առաջաբանը, որը լույս է տեսել 1921 թ. «Քաղաքականություն եւ պատմություն» գերմանական հրատարակչական ընկերության կողմից: Այնտեղ պատկերված է հայկական ցարդերի ամենամեծ կազմակերպչի՝ Թալեաք փաշայի դատավարությունը, որտեղ նրան սպանողին գերմանական դատարանն արդարացրեց:

6. «Արան», լույս է տեսել 1926 թվականին: Դրա մեջ մտնում է նաև «Բանկիր» պատմվածքը:

7. «Պատանի Հուսեյնը» (նովելներ Թուրքիայի մասին): Այդ շարքում, «Բանկիրից» բացի կա նաև հիանալի մի պատմվածք երիտասարդ հայ մոր ճակատագրի մասին:

«Ներխուժում կանանց բաղնիք», լույս է տեսել «Բեռլինյան օրաթերթ»-ում 20-ական թվականների սկզբին, իսկ 1921 թ. առանձին գրքով:

8. Վերելում նշված «Ներխուժում կանանց բաղնիք» պատմվածքը, զինվորի ճակատագրի մասին գրած նովելի հետ միասին, ռուսերեն լույս է տեսել Մոսկվայում 20-ական թվականներին:

9. «Հայ մորը» պատմվածքը շատ կարեւոր գործ է տարաբախատ հայ մոր ճակատագրի մասին: Հայերեն քարզմանն է Պ.Միքայելյանը, նրա քարզմանությամբ այն լույս է տեսել նաև ռուսերեն 1956 թ. (Երեւանում):

10. «Բարի լույսը» հոդվածը նվիրված է հայ ժողովրդի վերածննդի 50-ամյակին: Գրել եմ 1965 թվականին: Լույս է տեսել հայկական մամուլում: Այն պարունակում է Բեյրութում իմ կատարած մի քանի լուսանկարներ: Արեւմտագերմանական թերթերը հրաժարվեցին, ուստի այն հրատարակվեց շվեյցարական «Աշխարհի շաբաթը» հանդեսում 1966 թ.:

Այսօրվա համար այսքանը:

Խնդրում եմ տեղյակ պահեք նամակը ստանալու մասին:

Որտե՞ղ է Ձեր մշտական բնակավայրը, Հայաստանու՞մ, քե՞զ Գերմանիայում: Եթե իմ ենթադրությունը ճիշտ է, ապա շատ ցանկալի կլիներ, եթե կարողանայիք Հայրենիք վերադառնալ Հոռմով: Ձեզ համար դա շատ ավելի լավ կլիներ, իսկ ես մեծ քավականությունամբ Ձեզ հնարավորություն կտայի օգտվել Հայաստանի վերաբերյալ իմ արխիվներից:

Ձեզնից տեղեկություն ստանալու դեպքում անպայման կարծազանքեմ:

Բարեկամական ողջույններով Ձեր՝ Արմին Վեզներ:

Իմ մասին շատ կարևոր հոդված կարող եք գտնել պրոֆ. դոկտ. Ալբերտ Զյորգելի գրականության պատմության շարքից՝ «Էքսպրեսիոնիստոնիզմի նախապաշարմունքների մեջ» («Շամանակի պոեզիան եւ պոետները») գրքում: Լույս է տեսել 1925 թ. Լայպցիգում:

Հայերի ցեղասպանության մասին սեփական վկայությունների հիման վրա Ա.Վեզների գրած աշխատություններից բերում ենք մի քանի հատվածներ ու մտորումներ:

Մեծ Եղեռնի մասին հուզիչ վկայություն է «Հայ մորը» գործը: Դիմելով բուրբակա հայասպանների ճիրաններում հայտնված հայ մորը, հեղինակը գրում է. «Դու ինձ չէիր տեսնում, երբ ես, մեկուսի կանգնած, քեզ էի նայում: Լուռ դիտում էի, քե երևեսաներիդ ինչպես ես բնեցնում լիարյունի ցոլքի տակ, չոր, փոշոտ գետնին: Ահա, դստրիկիդ պառկեցրիք փոքրիկ որդուդ կողքին, ծածկեցիք չբե ծաղկանախշ վերմակով, ինչպես ամեն գիշեր այն օրից ի վեր, երբ քեզ ստիպեցին բռնել տարագրության ճանապարհը:

Ի՞նչ խոր ընկճվածություն էր հառնում քնած երեխաների փոքրիկ ձեռքերից: Դրանք վերմակի վրա հանգչում էին կույ եկած տերեւների պես, սարսռում էին աղոտ լույսի տակ: Ինքդ էլ կծկվեցիր չոր գետնին, ցանուցիր թափված իրերի կողքին: Աչքերդ հոգնածությունից փակվում էին, սակայն միտքդ այդ պահին դեզերում էր հեռու հեռվում՝ պապենական հարկի ներքո,

որտեղ արդեն տիրակալում էին քամին ու ամայությունը: Մտաբերում էիր այն ամենը, ինչ մոտ ու սիրելի էր քեզ: Հիշում էիր ամուսնուդ, որին օրը ցերեկով պատի տակ սպանեցին, հիշում էիր տաք անկողինդ, տան փայտե մաշված հատակը, որը երգածայն ճոնչում էր ճոճվող օրորոցի ծանրությունից, դողողողում՝ ներս ու դուրս վազող երեխաներիդ քայլերի տակ...:

Դու մեկն էիր այն հազարավոր հայերից, որոնցով լցված էր ամբողջ հարրավայրը: Ծուխ էին արձակում տարագիրների խղճուկ վրանները, եւ բվում էր, քե դաշտից ամպի պես ճահճատենողի գոլորչի էր բարձրանում: Դու ծվարել էիր բշխառության ճամբարում՝ բերանբսիփայր փռված սղամարդկանց կողքին, որոնք այնպես ծանր էին չնչում, կարծես վազելով լեռ էին բարձրացել կանանց հետ, որոնց երկար ու խռիվ մազերը տրորվում էին անցնող-դարձողների ոտքերի տակ: Մարդկանց մարմինները բվում էին անհրական: Չորս կողմ տարածված նրանց ձեռքերն ու ոտքերը կացնահար ճյուղեր էին կարծես: Այդ մարդկանց հոգիները սավառնում էին հարազատ վայրերում, մինչդեռ քնի մեջ խորասուզված նրանց մարմինները երազում շարունակում էին իրենց գաղթը, քարշ գալիս դեպի անհայտ հեռուները...:

Ինձ չէիր տեսնում: Եթե աչքերդ բաց անեիր, ինձ էլ կհամարեիր մեկն այն մարդկանցից, որոնք գալիս էին բունավորելու կյանքիդ բազմաչարչար մնացորդը: Մինչդեռ ես խեղճուկրակ մի գինվոր էի, ռազմի դաշտերում քարշ էի տալիս իմ հրարորոյ, տանջահար սիրտը... Իմ ճակատագիրն էլ նման էր բռնին՝ մեռնել...

Ես նայում էի, դիտում կարկատած զգեստդ, դեմքիդ քնքուշ դավկությունը, ճոխ ու սետրակ հյուսքերդ: Հայացքդ սահում, շոյում էր ասես քնած երեխաներին, որոնք երազում ժպտում էին: Ես հիացախառն ափսոսանքով նայում էի քնքշաքնքուշ սիրո արժանի, բայց արդեն սովի ու կործանման դատապարտված փարթամ կոճքիդ, սլացիկ հասակիդ... Նայում էի հոնքերիդ վերեսում աղեղված խոր կնճիռներին, որ քանդակել էին երեկոն եւ ճակատագիրը... Հենվել էիր իրերի կապոցին: Ըն մեջ անխախտ վճռականություն կար՝ առաջ տանել զավակներիդ անապատով մեկ, լեռնանցքից լեռնանցք, կայանից կայան, աղբյուրից աղբյուր՝ միշտ հավատով, միշտ հույսով լի...

Այս պատկերը մնաց իմ հոգում դրոշմված, երբ ես անցնում էի կյանքի բովոյ, երբ ընկերներնիս՝ թուրքական վրաններում պատասխարված անհող զինվորների հետ էի: Այս պատկերն ինձ հայտնվեց բացվող ամեն օրվա հետ, ձուլվեց առօրյա աշխատանքիս, միահյուսվեց աշխարհի վայրի գեղեցկությանը. մնաց անմոռաց եւ անօրհնելի...»¹

Հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, վկայություններ ու գիտահետազոտական աշխատություններ են հրատարակվել աշխարհի տարբեր լեզուներով, սակայն դրանց կողքին անգնահատելի են 1921 թ. հունիսին կայացած բեռլինյան հանրահայտ դատավարության սղագրություններն ու դրա հետ կապված փաստագրական նյութերը:

1921 թ. հունիսի 2,3-ին Բեռլինում տեղի ունեցած հայտնի դատավարության ժամանակ Ա.Վեզները հանդես եկավ որպես վկա եւ երդվյալ ստեճակավորներին առաջարկեց ցուցադրել իր լուսանկարած հայկական կոտորածների ու տեղահանության ողորդողական պատկերները: Բացի դրանից, հայերի ցեղասպանության վերաբերյալ Ա.Վեզների վկայությունները համառոտ ու պատկերավոր ձեւով շարադրված են 1921 թ. հրատարակված «Թալեսար փաշայի դատավարությունը» սղագրության առաջարկում: Այնտեղ նա նշել է. «Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր այդ պատերազմում եւ թերեւս մարդկության ամբողջ պատմության մեջ: Կատարված հանցագործությունն այնքան հրեշափոր է, որ նրա արձագանքները ցնցեցին մարդկանց նույնիսկ պատերազմի ժամանակներում ու տարածվեցին բոլոր երկրներում...Եւ սիհա հայ անհայտ ուսանողի ատրճանակի կրակոցը, որը սպանեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարին, եւ դրա հետ կապված դատավարությունը ամբողջ աշխարհի ու նաեւ գերմանական ժողովրդի ուշադրությունը սեւեռեցին համաշխարհային պատերազմի ամենաարյունալի էջին, ակնհայտ դարձավ ճշմարտությունը՝ երիտթուրքական

կառավարության կողմից մի ամբողջ ժողովրդի ծրագրավորված բնաջնջումը: Իրադարձությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստերի ծանրության տակ տառապող ու լռակյաց գոհր ակամայից դարձավ մեղադրող եւ մեղադրյալի արողին այլեւս չկա Մողոմոն Թեհլիրյան, այլ կա արյունաչաղախ ննջեցյալի ստվերը, խորհրդավոր իրավիճակի այնպիսի խորիմաստ հաստատում, երբ մեղավորը ոչ թե սպանողն է, այլ սպանվածը»¹

Ա.Վեզները հավաստի փաստերով ցույց է տվել, որ երիտթուրքական ոճրագործների կազմակերպած եւ իրագործած ցեղասպանության հետեւանքն այն եղավ, որ բնաջնջվեց այն ժամանակվա հայ «ժողովրդի շուրջ կեսը, որը կարծես թե բարձրանում էր գերեզմանից եւ մոխրացած ձեռքերը կարկառում էր պատերազմի սարսափների, դսիճի դաժանությունների դեմ ու դատարանի ամբիոնից մի անգամ եւս ի լուր աշխարհի բացականչում էր անկարագրելի ողբերգության մասին»²

Ներկայանալով Բեռլինյան դատավարություն որպես հայերի ցեղասպանության ու թուրքական ոճրագործությունների ականատես եւ վկա, Ա.Վեզները մատնանշել է, որ իր վկայությունները ինչպիսիք ու որքան էլ լինեն, դրանք միայն մասնիկները կարող են կազմել տեղի ունեցած աննախադեպ ու սարսափելի իրողության մեջ: Բնութագրելով Բեռլինյան դատավարությունը, Ա.Վեզները այն կարծիքն է հայտնել, որ իր առանձնահատկությամբ եւ որ գլխավորն է՝ ընդունած արդարագի վճռով, այն համաշխարհային պատմական նշանակություն ունի. «Թալեսարի հանցագործությունն այնքան սարսափելի էր, որ սպանողի արարքը, որը որպես արյան վրեժ, բռնության գործողություն, մենք բնականորեն մերժում ու ցավում ենք, այդուհանդերձ մեզ բվում է այն որպես փրկության միջոց, որով խիզախ էակը սեփական ուժերով ազատագրում է իրեն: Այո, ես այն կարծիքին եմ...որ դա պատմության կամքն էր, երբ

¹ «Արեգակ», ամսաթերթ, բացառիկ նւիրված Մեծ Եղեռնի հիսունյակին, Լոնդոն, ապրիլ 1965 թ., էջ 23-24:

¹ "Der Prozeß Talaat Pasha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang" Berlin, 1921, S. VII.

² Նույն տեղում, էջ VII:

գոհերից մեկի ձեռքով սպանվեց Թալեսարը»¹ Ա.Վեզների պատկերավոր խոսքերով՝ «Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը միայն խորհրդանիշ էր, մի հյուլե, որի մեջ խտացված ու ցայտուն արտահայտված էին հայ ժողովրդի վերքերը, նրա ազգային ցավը, խիզախ ինքնապաշտպանությանը հաստատված նրա արդարացի տենչը»²

Եւ ահա հյուլեն պայթեց ու դատավարությունների համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ մեղադրյալի դերում սպանվածն էր, իսկ գլխավոր մեղադրողը սպանողն էր: Եւ, բնականորեն, այդ արդարացի դատը պատմության մեջ մտավ որպես ոչ թե Ս.Թեհլիրյանի, այլ Թալեսար փաշայի դատավարություն:

Ա.Վեզներն իր ուսումնասիրությունների ու քաղաքագիտական վերլուծությունների հիման վրա այն հետևությունն է հանգել, որ հայերի ցեղասպանությունը վաղորդ ծրագրված էր «Իքթիհատ վե Թերաքի» կազմակերպության կողմից: Այդ հրեշավոր ծրագիրը իրագործվեց գործադիր իշխանության կողմից, որի գլխավոր ղեմքը ներքին գործերի նախարար Թալեսար փաշան էր: Ա.Վեզները հաստատականորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի տեղահանության եւ ֆիզիկական բնաջնջման հարցում: Նա հատկապես բացահայտ անհիմն է համարում «ռազմական անհրաժեշտությամբ» հայերի տեղահանության վարկածը. «Ինչպե՞ս բացատրել արեւմտաանատոլիական վիլայեթներից հայ բնակչության բռնի տեղահանությունը, որտեղ հայերի չափազանց փոքրամասնությունը որեւէ վտանգ չէր կարող ներկայացնել, չէ՞ որ նրանք ապրում ու աշխատում էին ռազմական գործողություններից հարյուրավոր մղոններ հեռու: Մի՞թե հայտնի չէ ամերիկյան դեսպան Մորգենրաուի առաջարկությունը տեղահանվող հայերին Ամերիկա վերաբնակեցնելու մասին: Հայտնի է նաեւ այն փաստը, որ թուրքական կառավարությունը ոչ միայն մերժեց այդ

առաջարկությունը, այլ դրանով հաստատեց, որ այսպես կոչված ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը»¹

1922 թ. Ա.Վեզները հրատարակում է «Դիչ Արարատից» գրքույկը. որտեղ կրկին դատապարտելով ու անարգանքի սյունին գամելով հայերի ցեղասպանության կազմակերպիչներին՝ միաժամանակ խարազանում է արեւմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը, արդարացիորեն եւ իրեն յուրահատուկ պատկերավորությամբ մերկացնում է նրանց քաղաքական ու դիվանագիտական խարդավանքները: Նա, ի լուր աշխարհի, գրել է. «Ի՞նչ արեցին Արեւմուտքի հաղթանակած տերություններն իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում: Թույլ տվեք, Չեզ, այդ պետությունների ղեկավարներից, հիշեցնել Չեք հանդիսավոր հավաստիացումներն ու երաշխավորումները, որոնք պատերազմի ժամանակ խոստացել էիք Հայաստանին: Թույլ տվեք մի անգամ եւս հիշեցնել Չեզ եւ ողջ աշխարհին Ֆրանսիայի Նախարարների խորհրդի նախագահ Կլեմանտոյի 1918 թվականի հուլիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքերն այն մասին, որ մարդկության եւ արդարության օրենքների հիման վրա դաշնակից տերությունները մշտապես իրենց պարտք են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար: Մի՞թե չեն լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում են Պուանկարեի մեծադորդ այն խոսքերը, որոնցով նա դիմեց Կիլիկիայում կաթոլիկ հայերի պատրիարքին: Լոյդ Չորջը, Ռոբերտ Մեսիլը չհապաղեցին հետեւելու նրա օրինակին եւ նրանցից յուրաքանչյուրը որքա՞ն կոչեր են ստորագրել հանուն Հայաստանի ազատության:

Բրիտան, Դեշանե՛, Օրլանդո, Սոնի՛նյո, Վիլսոն՛ այնքան շատ են մեծահամբավ անունները, որոնք շքերթի

¹ Նույն տեղում, էջ VIII:

² "Der Prozeß Talaat Pasha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang" Berlin, 1921, S. VIII.

¹ "Der Prozeß Talaat Pasha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang" Berlin, 1921, S. IX.

պաշտոնական համազգեստների նման անցնում են մեր կողքով՝ իրենց հետեւից բողոնելով հիասթափության դատարկ հռռոցի արձագանքը:

Ինչպիսի՞ն եղավ միմյանց հաջորդած այդ հանդիսավոր երդումների արդյունքը. գուցե սրբազան խաչակրաց արշավանքի հայտարարում՝ մ: Նոր քարան, սով ու կոտորած»:¹

Այնուհետև Ա.Վեզները ցույց է տվել, որ պատերազմի ժամանակվա արյունալի իրադարձություններին հաջորդեցին հալածանքները Ղարաբիլիսայում, Ալեքսանդրապոլում, 1921 թ. տեղի ունեցած Փամբակի, Սամսունի ոճրագործությունները, 1922 թ. վերջին կոտորածներն ու բռնի տեղահանությունները Անկարայի շրջանում: Այդ հրապարակման մեջ նա հատուկ տեղ է հատկացնում Չմյուռնիայի ողբերգությանը: Հարկ է ասել, որ Չմյուռնիայում (Իզմիրում) հայերն ապրել են ավելի քան ութ դար: Նրանք հիմնականում բնակվում էին քաղաքի Հայոց, Գետեզերք ու Քարափ քաղամասերում եւ ունեին չորս եկեղեցի ու մեկ ազգային հիվանդանոց: Նրանք զգալի դեր էին կատարում քաղաքի տնտեսական ու սոցիալական կյանքում: Աշխարհին հայտնի էին Չմյուռնիայի հայ արհեստավորների՝ ոսկերիչները, չրագործները, ժամագործները,

մետաքսագործները, վաճառականները, իսկ քաղաքի շրջակա գյուղերի հայ բնակիչները գրադվում էին այգեգործությամբ ու պտղարտությամբ: Չմյուռնիան հանդիսանում էր նաև հայ մշակույթի կարեւոր կենտրոններից մեկը: 18-րդ դարի կեսերին այնտեղ տպագրվել են բազմաթիվ հայ գրքեր ու պարբերականներ: Բարի համբավ էին վայելում Մեսրոպյան վարժարանը, դպրոցները, մշակութային ընկերությունները եւ հայ քաղաքը: 1915 թ. միայն Չմյուռնիա քաղաքում ապրում էին ավելի քան 30 հազար հայեր: Օգտագործելով 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմը, թուրքական իշխանություններն ամբողջովին ցեղասպանության ենթարկեցին Չմյուռնիայի եւ նրա շրջակա գյուղերի հայ բնակչությանը: Արդեն 1922 թվականին այդ տարածքում ոչ մի հայ չմնաց:

Ա.Վեզները մատնանշել է, որ թուրքական բարբարոսներն

խապառ այրեցին դարերի ընթացքում հույների ու հայերի կառուցած այդ գեղեցիկ քաղաքը, վերածելով մոխրակույտի: Նկարագրելով Չմյուռնիայի հայության կոտորածները, նրանց ստեղծած նյութական եւ հոգեւոր արժեքների ոչնչացումը, Ա.Վեզներն այն հետեւությանն է հանգում, որ «Հայերի բռնամիները հանդիսանում են նաև մարդկության բռնամիներ»:²

Դիմելով արևմտյան տերությունների ղեկավարներին, նա գրում է. «Ինչպե՞ս կարելի է ապացուցել այն մարդկանց մեղքը, որոնց սպանել են, կախադան բարձրացրել, բանտերում տանջամահ արել: Ծծկեր երեխաները եւ նրանց մայրերը մեղավոր չեն, մեղավոր է նրանց արյունը»:³

Պատկերելով Չմյուռնիայի հայության սարսափելի կոտորածները, նա շարունակում է. «Մենք տեսնում էինք խեղդվողներով լեփ-լեցուն ծովը, փրկության գուր հույսով մարդիկ լողում էին դեպի նավերը, սակայն այնպիսի մարդ էին նկատվում նրանց փայտացած մարմինները: Հրդեհի ծխի մեջ քաղված գիշերը ոռնում էր սարսափից, այրվող տներից դուրս էին բերում տղամարդկանց, կանանց եւ երեխաների, որպեսզի հանձնեին գնդացիների պատրաստի կրակին: Նահատակվողների ճիչը խավարի միջից կարծես թե հասնում էր եվրոպական գիշերվա անդորրին, եւ այդ ամենը զուգակցվում էր խոր լռությամբ, որն ավելի սարսափելի էր, քան դրան նախորդած ճիչը:

Երբ այս ամենը կատարվում էր եվրոպական պետությունների նավերի ներկայությամբ, նրանց գորքերի աչքի առաջ, ապա ինչ էր տեղի ունենում երկրի խորքում: Ու՞ր էին բշում մարդկանց անհամար խմբերը: Լեռների կիրճեր կամ փողոցներում հարկադիր աշխատանք կատարելու, սակայն նրանք զրկված էին ծածկի տակ մնալու իրավունքից եւ ոչ մի սնունդ չէին ստանում: Այդ պայմաններում նրանք մահանում էին սովից ու հիվանդություններից»:³

Մերկացնելով եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ, Ա.Վեզները

¹ Wegner A. Der Schrei vom Ararat. Leipzig, 1922, S. 2-3.

¹ Wegner A. Der Schrei vom Ararat. Leipzig, 1922, S. 3.

² Նույն տեղում, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 5:

գրում է. «Դա Եվրոպան է, որը մշտապես ձգտում է մի անարդարությունը փոխարինել մյուսով և չի բարձրում իր ուրախությունն այնպիսի հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակ հազարավոր անմեղ կանանց ու երեխաների արյան զնով, Եվրոպան, որը գերադասում է վաշխառուական առևտուր անև նրանց տանջամահ անողների հետ, քան փրկել հալածված մարդկային ցեղի բեկորները կործանումից:

Այդպես՝ են կատարում Արեւմուտքի հաղթող պետություններն իրենց հանդիսավոր խոստումները: Բավական չէ՞, որ դուք ձեզ, ժողովուրդների իմաստուն ծառաներ համարելով, պատերազմի ժամանակ արյունաքամ հայությանը ստիպեցիք Ձեր կամավորները դառնալ: Ավելին, դուք խանգարեցիք երիտասարդ հայկական հանրապետությանը՝ ապաստան տրամադրելու եղեռնից մազապործ փախստականներին: Եւ դա այն բանի համար, որպեսզի անչափահաս երեխաները դուրս շարտվեին ամերիկյան որբանոցներից և ոչնչագվեին Վանի փրկված բնակիչները, որոնք ոչ մի վտանգ չէին ներկայագնում Անգորայի կառավարությանն ու բուրքական պարոններին:

Ֆրանսիան, որը գրավել էր Կիլիկիան միայն այն բանի համար, որ նրան դուր էին գալիս տարածքի բերքառատ հարքավայրերն ու բամբակը, Անգորայի հետ կնքած պայմանագրով այդ նահանգը կրկին հանձնեց Թուրքիային՝ նավրի կամ այլ օգուտներ քաղելու համար: Եւ ի՞նչ, 150 հազար հայեր, հավատարմով ֆրանսիական հանրապետության խոստումներին, վերադարձան իրենց հայրենի օջախները, սակայն վերստին հանձնվեցին նախկին հալածողներին»¹:

Այդ ազդու փաստաթղթում, ի լուր աշխարհի, Ա.Վեգները հայտարարում էր. «Ոչ նավթ, ոչ բամբակ, այլ մարդ: Մի՞թե նույն Ֆրանսիան չի հավաստել ամբողջ աշխարհին, որ արշավանք է ձեռնարկել փոքր ժողովուրդների իրավունքները պաշտպանելու համար:

Որտե՞ղ է փոքր ժողովուրդների ազատությունը: Մի՞թե Ֆրանսիան չէր գնը տրամադրում Թուրքիային, որն էլ կրակում

էր Հայաստանի սրտին...»¹

Դիմելով Արեւմուտքի երկրների կառավարողներին, Ա.Վեգները հիշեցնում է, որ գտնվելով արեւելյան բարբարոս հորդանների շրջապատում, Հայաստանը վաղնջական ժամանակներից մեծ ազդեցություն է գործել Արեւմուտքի մշակույթի վրա, կամրջի դեր է կատարել Սերձավոր Արեւելյի և Եվրոպայի միջև: Նա մեղադրում է եվրոպական կառավարողներին, որոնց բողոքությամբ Հայաստան կրկիոր անապատի վերածվեց, նրա բնակիչները ցեղասպանության ենթարկվեցին, իսկ հրաշքով փրկվածները որպես տարագիրներ հայտնվեցին օտար երկրքի տակ: Նրանք՝ այդ տարագիրները, «հավատով լեցուն իրենց հայացքները միշտ հառել են Արարատի բարձունքին, որտեղ ինչ-որ ժամանակ Նոյի աղավճին ձիբենու ճյուղ է հասցրել»²:

Արմին Վեգները իր մահկանացուն կնքեց 1978 թ. մայիսի 17-ին Հռոմում, 92 տարեկան հասակում: Մեծ մարդասերի հայապաշտպան արդարացի, հզոր ձայնը առաջադեմ մարդկության ձայնն է:

Ստորեւ ներկայացնում ենք Ա.Վեգների 1919 թ. հունվարին ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնին հղած բաց նամակի ամբողջական տեքստը, որը Մեծ Եղեռնին նվիրված պատմական կարևոր փաստաթղթերից մեկն է: Այն ամբողջությամբ հայերեն հրատարակվում է առաջին անգամ:

¹ Wegner A. Der Schrei vom Ararat. Leipzig. 1922. S. 6.

¹ Նույն տեղում, էջ 6:

² Wegner A. Der Schrei vom Ararat. Leipzig. 1922. S. 8.

ԲԱՅ ՆԱՄԱԿ
ՀՅՈՒՄՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՎՈՒԴՐՈ ՎԵԼՍՈՆԻՆ՝
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԱՆԱՊԱՏ ՏԵՂԱՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1919 թվականի հունվար,
Բեռլին

Պարոն նախագահ.

Ձեր ականջները չփակեք, երբ մի անծանոթ խոսում է Ձեզ հետ: Անցած տարվա հունվարի 8-ին Ձեր դեսպանությունում կոնգրեսին հղած Ձեր ուղերձում առաջ քաշեցիք Օսմանյան կայսրության բոլոր ոչ բուրք ժողովուրդների ազատագրության պահանջը: Անտարակույս, նրանց թվին է պատկանում նաև հայ ժողովուրդը: Դա այն ազգն է, որին ես պաշտպան եմ կանգնում:

Որպես մեկը սակավարիվ այն եվրոպացիներից, որոնք սկզբից եւեթ ականատես են եղել Անատոլիայի ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում նրա (հայ ժողովրդի -Մ.Մ.) զարհուրելի բնաջնջմանը եւ Եփրատի ափերին, Միջագետքի անապատի քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ես համարձակվում եմ Ձեզ ներկայացնել թշվառության ու սարսափների այն պատկերները, որոնք տեսել եմ իմ սեփական աչքերով շուրջ երկու տարվա ընթացքում, որոնք երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից: Ես ասում եմ դա այն պահին, երբ դաշնակցային կառավարությունները Ձեզ հետ միասին պատրաստում են Փարիզում կայանալիք խաղաղության բանակցությունները, որոնք էլ պետք է որոշեն աշխարհի ճակատագիրը հետագա տասնամյակների համար: Հայ ժողովուրդը, որը շատերի շարքում փոքրերից մեկն է, դառնալու է բանակցությունների

խնդրո առարկա, բանակցություններ, որոնցով պայմանավորված է փառարանված մեծ պետությունների ապագան: Դժվար չէ հասկանալ այն իրողությունը, թե ինչպես են ոտնահարվել այդքան փոքր ու տառապանքի մեջ գտնվող ազգի շահերը: Դրանք ներկայումս էլ հետին պլան են մղվում, որը պայմանավորված է եվրոպական մեծ տերությունների շահախնդիր նպատակներով: Դա նշանակում է, որ կրկնվում է Հայաստանի նկատմամբ հարգանքի բացակայության, նրա շահերն անտեսելու եւ մոռացության տալու խաղը, որը հաճախ տեղ է գտել պատմության մեջ: Նման իրողությունը խորին կարեկցություն է առաջացնում, քանի որ մոլորակի ոչ մի ժողովրդի հետ այդքան անարդարացի չվարվեցին, որքան հայ ժողովրդի հետ: Դա քրիստոնեությանը վերաբերող հարց է, դա ամբողջ մարդկության հարցն է:

Հայ ժողովուրդը չմասնակցեց աշխարհամարտին, նրան այդպիսի հնարավորություն չընձեռվեց: Նա դարձավ այդ պատերազմի զոհը: Երբ բուրյական կառավարությունը 1915 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին երկրի երեսից բնաջնջելու իր հրեշավոր ծրագրի իրագործմանը, Ֆրանսիայում, Անգլիայում եւ Գերմանիայում նրանց եվրոպական ընկերակիցների ձեռքերը շաղախված էին սեփական չարարախտ արյունով, որը հեղում էին իրենց անընմբռնելի ցավոտ կուրությանը, եւ ոչ ոք չխանգարեց Թուրքիայի խավարամիտ տիրակալներին՝ իրականացնելու այն տանջալից խոշտանգումները, որոնք կարող են համեմատվել միայն խելագար հանցագործի գործողություններին: Այդպես նրանք մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ծերունիների եւ երեխաների, հղի մայրերի ու ծծկեր մանուկների քշեցին արարական անապատները միայն մի նպատակով՝ սովամահության մատնել բոլորին:

Վաղնջական ժամանակներից Եվրոպայում ընդունված էր, որ Միբիրը աշխարհի ամենաանհյուրընկալ վայրերից մեկն է եւ այնտեղ ապրելու դատապարտվելը համարվում է ամենադաժան պատիժը: Մակայն հայտնի է, որ այդ երկրամասում կան բերքառատ հողեր եւ, չնայած ցուրտ ձմռանը, եղանակն առողջարար է: Ի՞նչ է Միբիրը Միջագետքի անապատների համեմատությամբ: Լայնարձակ այդ տարածքում չկա ոչ մի

օգտակար բույս, ոչ մի ծառ, ոչ մի անասուն, հողը ծածկված է մոլախոտով եւ հիմնականում անմարդարճակ է: Մղոմներով ձգվում են գորշ կրահողով ծածկված հարթավայրեր, մերկ անապատներ, գետերի ափերին կուտակված ժայռեր ու քարեր, որոնք խանձվում են արևի անողոր ճառագայթներից, հորդառատ աշնանային անձրեւներ, ուժեղ սառնամանիքներով խստաշունչ ձմեռային գիշերներ: Բացի երկու լայն գետերից, այդտեղ ջրի այլ աղբյուրներ չկան: Հազվադեպ հանդիպող գյուղակները հազիվ կարող են կերակրել փոքրաթիվ արարական բեղվիմներին, որոնք իրենց աղքատիկ ու խղճուկ կացությունից յուրաքանչյուր օտարերկրացու նայում էին որպէս ցանկալի որսի:

Իրենց հարազատ բնակավայրերից, որտեղ հայերն ապրել են երկու հազար տարուց ավելի, կայսրության բոլոր կողմերից՝ լեռնային շրջանների ժայռոտ կիրճերից մինչեւ Մարմարի ծովի ափերն ու հարավի արմավենիների օազիսները, նրանք քչվեցին այդ անմարդարճակ անապատները:

Արդարացնել դա՝ իբր նրանց նոր բնակավայրեր տրամադրելու անհրաժեշտությանը, առնվազն ծաղր է մարդկային զգացմունքների հանդեպ: Իրականում տղամարդկանց կոտորում էին զանգվածաբար, խմբերով կապկպում էին միմյանց շղթաներով կամ սլարաններով եւ զգում էին գետը կամ նետում ժայռերից: Կանանց ու երեխաներին վաճառում էին հրապարակային աճուրդներում, ծերերին ու դեռահասներին մահակների մահացու հարվածներով քշում էին հարկադիր աշխատանքների: Սակայն դրանով չէին բավարարվում: Իրենց կեղտոտ ձեռքերով գրկելով հայությանը իր առաջնորդներից ու ներկայացուցիչներից, օրվա յուրաքանչյուր ժամ ուղղակի անկողնուց հանելով կիսամերկ մարդկանց, քշում էին մահվան ճամբարներ, քալանում էին նրանց տները, կրակի մատնում բնակավայրերը, ավերում էին եկեղեցիները՝ վերածելով դրանք մզկիթների, բռնագրավում էին անասուններն ու սալերը, տանջահար մարդկանց ձեռքից խլում էին հացի վերջին փշրանքները, նրանց վրայից հանում էին հագուստը, փայրենաբար սլոկում ու յուրացնում էին նրանց քանկարժեք գարդարանքները: Թուրք պաշտոնյաները, սպաները, զինվորները, քոչվորները միմյանց հետ մրցում էին

արյունոտ խրախճանքներում իրենց անասնական կրքերին հագուրդ տալու համար: Վրասներից բռնությանը դուրս էին բերում որր աղջիկներին, մահակներով ծեծում էին հողի կանանց ու մահամեթներին, որոնք հագվիհագ քարշ էին տալիս ոտքերը, մինչեւ որ բնկնում էին անչնչացած, ճանապարհի փոշին վերածելով արնաչաղախ զանգվածի: Այդ ճանապարհներով անցնող ուղեւորները իրենց սարսափահար աչքերը շրջում էին դիվային դաժանությանը քշվող մարդկային զանգվածից, նրանք իրենց հայացքները շրջում էին ահավոր տեսարաններից, շրջվում էին, որպէսզի չտեսնեն սպանված նորածիններից գոյացած բլուրները եւ ճանապարհներին մանուկների կտրատված ձեռքերը, որոնք կարծես մեկնվել էին իրենց դահիճներից:

Հայերի քարավանները, որոնք իրենց հայրենիքից՝ Արեւմտյան Հայաստանից տեղահանվելու առաջին օրերին բաղկացած էին հազարավոր մարդկանցից, Հալեպի շրջակայքը հասնելու պահին մնացել էին բնդամներ մի քանի հարյուր մարդկանցով: Այդ իրողության բացատրությունը սլարգ է: Դաշտերը ծածկված էին սեւացած, ուռած, գարշահոտությանը օղբ բունավորող դիակներով, մերկ ու բռնաբարված մարմիններով: Թուրք ժանդարմները տեղահանված հայերից շատերին գույգ-գույգ կապելով նետում էին Եփրատ՝ ի կեր ձկներից, երբեմն էլ, ծաղրելով դժբախտներին, մի քիչ ալյուր էին լցնում սովահար մարդկանց դողդողացող բուռը եւ նրանք ազահությամբ լիզում էին սոսկ նրա համար, որ երկարացնեն իրենց հոգեվարքը:

Անգամ Հալեպի մերձակայքում տեղահանվածներին քույր չէին տալիս շունչ քաշելու, ելնելով անհիմն, անըմբռնելի նկատառումներից: Բոկոտն, հյուծված, տենդից ու այլ հիվանդություններից ուժասպառ մարդկանց ծայր աստիճան նոսրացած խմբերը արեւի կիզիչ ճառագայթների տակ, ժայռոտ կիրճերով ու անանցանելի բլուրներով քշում էին հարյուրավոր մղոմներ, դեպի կիսաարեւադարձային ճահիճներ՝ մահվան գիրկը: Այնտեղ նրանք գտնում էին իրենց վախճանը, սպանվելով ու կողոպտվելով քրդերի ու ժանդարմների ձեռքերով, զնդակահարվելով, դաշունահարվելով, նահատակվելով ծարավից ու ցրտից, մեռնելով համաճարակներից, սառչելով,

ջրահեղձ արվելով եւ կեր դառնալով շնագայլերին: Երեխաները մեռնում էին արգունքներն աչքերին, տղամարդիկ նետվում էին ժայռերից, մայրերն իրենց փոքրիկներին նետում էին ջրհորներ, հողի կանայք, երգելով նետվում էին Եփրատի ջրերը, նրանք մեռնում էին ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով: Ես տեսել եմ խելագարվածների, որոնք ուտում էին իրենց մարմնի խորխոր, կանանց, որոնք եփում էին իրենց նորածինների մարմինները, աղջիկների, որոնք կտրատում էին իրենց մայրերի տաք մարմինները, որպեսզի նրանց աղիքներում գտնեն այն ոսկին, որը նրանք կուլ էին տվել ավազակ ժանդարմների սարսափներից:

Ավերակ քարավան-վրաններում տարաբախտները անօգնական ու անկարեկից պառկում էին կիսանեխած դիակների կողքին, սպասելով իրենց անխուսափելի մահվանը: Ի վերջո, որքա՞ն կարելի էր քարշ տալ խղճուկ գոյությունը՝ հատիկներ փնտրելով ձիերի բրբի մեջ կամ սնվելով խոտով: Այս տմենը, սակայն, տակ աննշան մասն է, ինչ ես ինքս եմ տեսել, ինչ ինձ պատմել են ժամերներս ու ժամապարհորդները կամ ինչ ես լսել եմ տեղահանվածներից շատերից:

Պարոն նախագահ, եթե Գուր քերթք գարհուրելի սարսափների մասին գրացուցակները, որոնք հավաքել են Լորդ Բրայսը Անգլիայում, Յոհաննես Լեպսիուսը Գերմանիայում, ապա կհամոզվեք, որ ես ամենեւին չեմ չափազանցում: Սակայն եթե ես համարձակվում եմ ենթադրել, որ այդ սարսափելի պատկերները, որոնց մասին լսել է ողջ աշխարհը, բացի Գերմանիայից, որին թյուրիմացության մեջ են գցել խայտառակորեն եւ ինչին դուք գիտակ եք, այդ դեպքում ի՞նչ իրավունքով եմ դրանք վերհիշեցնում: Ես դա անում եմ մարդկային բանականության իրավունքով, ազնիվ խոստումների պարտականությամբ: Երբ անցնում էի անապատում փախստականների ճամբարներով, երբ մտնում էի նրանց վրանները եւ նստում էի սովահարների ու մեռնողների խաիրների վրա, ես զգում էի նրանց աղերսող ձեռքերն իմ ձեռքերի մեջ, լսում էի հարյուրավոր մեռնողներին օրհնություն մաղթող քահանաների ձայնը, այնժամ երդվեցի ինքս էլ աղերսել նրանց համար, եթե կրկին հայտնվեմ Եվրոպայում: Սակայն այն երկիրը, ուր ես վերադարձա, աղքատ երկիր է: Գերմանիան

պարտված երկիր է: Իմ ժողովուրդը մոտ է սովին, փողոցներում շատ են մուրացկանները: Ինչպե՞ս կարող էի ես օգնություն խնդրել էլ ավելի աղքատ ժողովրդի համար այն ժողովրդից, որը, հավանաբար, ի վիճակի չի լինի փրկել ինքն իրեն: Իմ մեջ երբեք չի լուռ խղճի եւ մարդկայնության ձայնը եւ դրա համար էլ դիմում եմ Ձեզ: Այս նամակը պատգամ է: Իմ շրթունքներով խոսում եմ հազարավոր նահատակներ:

Պարոն նախագահ, այդ ժողովրդի նկատմամբ անարդարությունն անսահման է: Ես կարդացել եմ այն ամենը, ինչ գրվել է այդ պատերազմի մասին, կարդացել եմ աշխարհի բոլոր երկրների սարսափների մասին, բոլոր ճակատամարտերում կատարված կոտորածների մասին, տորպեդահարված նավերի, ինքնաթիռներից ոմբակոծված քաղաքների մասին, նողկալի սպանությունների մասին Բելգիայում, ֆրանսիական փախստականների աղքատության, Միլիոն արտաքսված գերմանացիների ու ռազմագերիների սասափելի վիճակի մասին, ահավոր հիվանդությունների ու համաճարակների մասին Ռումինիայում: Մակայն այստեղ խոսքն այն մասին է, որպեսզի պարզվի անարդարությունը, որպիսին չի կրել թվարկված ժողովուրդներից ոչ մեկը. ոչ ֆրանսիական, ոչ բելգիական, ոչ անգլիական, ոչ ռուս, ոչ սերբ, ոչ ռումինական եւ նույնիսկ ոչ գերմանական ժողովուրդը, չնայած նա շատ տառադանքներ է կրել այդ պատերազմում:

Հին ժամանակներում, գուցե, վայրենի ցեղերին է վիճակվել միայն նման ճակատագիր:

Պարոն նախագահ, սակայն այս դեպքում խոսքը վերաբերում է բարձր մշակույթի տեր, հարուստ ու փառավոր անցյալով, արվեստի, գրականության, գիտության ասպարեզում անանց ծառայություններով, ականավոր ու տաղանդավոր, խոր կրոնականությամբ, վսեմ բարեպաշտությամբ մարդկանցով հարուստ քրիստոնյա ժողովրդի մասին, որի ներկայացուցիչները սիռված են աշխարհով մեկ եւ երկար տարիներ ապրում են նաեւ Ձեր երկրում, տիրապետում են մոլորակի գրեթե բոլոր լեզուներին: Այդ ազգի կանայք, դուստրերը սովոր են նստել ճոճվող բազկաբոռներին, մարտը պատրաստած սեղանի շուրջ եւ ոչ թե պազել անապատի փոսերում: Հայերը խելացի վաճառականներ, բժիշկներ,

գիտնականներ, նկարիչներ, երկիրը բերքաշատ դարձնող ազնիվ ու ժրաջան գյուղացիներ են եւ նրանց միակ մեղքն այն է, որ անպաշտպան են, խոստում են նաեւ ուրիշ լեզուներով եւ երեխաներ են ծնում այլ հավատների պայծառներում: Յուրաքանչյուրը, ով գիտեւ պատերազմի իրադարձություններն Անատոլիայում եւ սեփական աչքերով տեսել է այդ ազգի ճակատագիրը, հասկանում է, որ հայ ժողովրդի ղեմ ճարպկորեն ու խարդախորեն առաջ բաշխած մեղադրանքները ոչ այլ ինչ են, երև ոչ նողկալի հեղափոխություններ, որոնք հնարվել են անպատկառ կառավարողների կողմից, որպեսզի պաշտպանեն իրենց խելահեղ եւ դաժան իշխանությունը, որն ընդհանուր ոչինչ չունի արդարության եւ մարդկայնության ոգու հետ: Եթե նույնիսկ այդ բոլոր կշտամբանքները հիմնված լինեին ճշմարտության վրա, դրանք ոչ մի դեպքում չէին արդարացնի այն սարսափելի չարագործությունները, որոնք կատարվել են հարյուր հազարավոր անմեղների նկատմամբ: Ես դրանում չեմ մեղադրում իսլամին, քանզի յուրաքանչյուր մեծ կրոնի ոգին ազնիվ է եւ առանձին մահմեդականների կատարած քայլերը ստիպում են մեզ կախել աչքերը Եվրոպայի գործողությունների առջև: Ես չեմ մեղադրում այդ երկրի հասարակ ժողովրդին, որի հոգին լեզուն է բարոյականությանը, սակայն չեմ հավատում, որ նրա կառավարող խումբը պատմության ընթացքում երբևէ կկարողանա նրան երջանիկ դարձնել այն բանից հետո, երբ նա փշրեց մեր հավատը քաղաքակիրթ լինելու հարցում եւ Թուրքիան գրկվեց ինքն իրեն կառավարելու իրավունքից բոլոր ժամանակներում:

Պարոն նախագահ, Դուք պետք է հավատաք իմ ձայնի անաչառությանը, քանզի ես այդ մասին խոստում եմ որպես գերմանացի, որպես ներկայացուցիչն այն ժողովրդի, որը սերտ բարեկամությամբ կապված է Թուրքիայի հետ եւ որին անարդարացիորեն կշտամբում են այդ բարեկամության հետեւանքով մարդկանց սարսափելի որսին գործակցելու մեջ: Գերմանական ժողովուրդը ոչինչ չգիտեր այդ ոճրագործության մասին: Եթե նրա կառավարությունը, որը մշտապես ընդդիմանում էր այդ իրադարձությունների անբարոյանքները եւ կրում է որևէ մեղք, ապա դա բուրբակյան իրականությունը, Խուրթիայում ազգամիջյան հարաբերությունները չիմանալն է,

իր ժողովրդի ապագայի նկատմամբ երկյուղն ու մտահոգությունը:

Ես ոչինչ չունեմ քաբցնելու, որ ժողովուրդների կյանքում բուրբությունը նույնպես կարող է մեղք դառնալ: Սակայն դառը կշտամբանքն այն բանում, որ տեղահանությունն աններելի էր, վերաբերում էր ոչ միայն գերմանական կառավարությանը:

1878 թվականի հուլիսին բեռլինյան համաձայնագրով ամբողջ Եվրոպան իր վրա էր վերցնում հայ ժողովրդի անվտանգության եւ անդորրության ապահովման սրբազան պարտականությունը: Սակայն երբևէ իրագործվել է այդ խոստումը: Նույնիսկ Արդուլ Համիդի կազմակերպած զանգվածային կոտորածները չխոհեմացրին նրան եւ կույր կրքոտությամբ հետևելով իր շահատենչական նպատակներին, Եվրոպան չցանկացավ պաշտպան կանգնել հալածված ժողովրդին: Թուրքիայի եւ Ձեր դաշնակից պետությունների միջև հաշտության բանակցություններում, որոնց տեղագիտ յարվածությամբ սպասում էին աշխարհի բոլոր հայերը, հայկական հարցին ծայրահեղ, չնչին նշանակություն տրվեց: Մի՞թե այդ ստոր խաղը պետք է երկրորդ անգամ կրկնվի, իսկ հայերը պետք է ստիպված լինեն անցյալ հիասրափություններից կրկին դասեր քաղել: Չի կարելի մեծ պետությունների եսամոլական ծրագրերի եւ հավակնությունների պատճառով հետին պլան մղել այդ փոքր ժողովրդի ապագան:

Պարոն նախագահ, փրկեցեք Եվրոպայի պատիվը: Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ճանաչել է հայերի իրավունքը ազատ ինքնորոշման մասին, իսկ նրանց ազգային պատգամավորները Փարիզում հռչակել են Հայաստանի անկախությունը: Սակայն ժողովուրդները չպետք է բավարարվեն միայն այդ իրավունքի ճանաչմամբ, քանի որ Թուրքիայի հայկական մարզերը ներկայումս հանդիսանում են անմարդարնակ երկիր, ուր երբեք չի վերադառնա դրա բնակչության երկու երրորդը: Բոլոր ժամանակների համար անուղղելի սխալ կլինեի, երև Ռուսաստանի հայկական մարզերը չանջատվեն ընդմիջտ այդ կայսրությունից, որպեսզի այնուհետև միավորվեն Անատոլիայի հայկական նահանգների եւ Կիլիկիայի հետ որպես մեկ միասնական երկիր՝ ազատ բուրքական տիրապետությունից եւ ելք ունենալով դեպի ծով:

Միայն այսպես հնարավոր կարող էր դառնալ փոխհատուցումը, հնարավորություն կրճճեռվեր ռուսական սահմանն անցած բազմաթիվ փախստականներին՝ վերադառնալու իրենց հարազատ օջախները, կրկին կենդանացնելու դատարկված քաղաքներն ու գյուղերը: Դա էլ բավարար չէ, պարոն նախագահ, ինչ որ զիտեք այդ ժողովրդի աղետի մասին: Բավարար չէ նաև այն, որ Դուք նրան տալիս եք պետություն վերստեղծելու հնարավորություն: Չէ՛ որ բարուբանդ են արվել նրանց տները, ամսայացել են դաշտերը, սպանվել են բնակիչները: Երկիրն այնպես է ավերվել, որ սեփական ուժերով չի կարող վերականգնվել: Ընդհատվել է առևտուրը, չեն գործում արդյունաբերությունն ու արհեստագործությունը: Ի դեմս բնաջնջված մարդկանց, այդ արժեքը երբեք չի կարող փոխհատուցվել: Տեղահանվածներից խլված ունեցվածքի յուրացմամբ դաժան եւ անհոգ կառավարողների կուտակած անհամար հարստությունը վերադարձնելու երաշխիքը գրեթե բացառված է:

Բազմահազարավոր հայերի բռնությամբ մահմեդականացրել են, հազարավոր մանուկներ արտաքսվել են, հազարավոր կանայք առեւտնագվել եւ դարձել են բուրբակյան հարեմների սարուկներ: Անհրաժեշտ է անվերապահ հավաստագրում, որ նրանք անարգել ազատություն կստանան: Անսպասում երկու տարուց ավելի սպրած հալածվածները, որոնք կվերադառնան հայրենիք, պետք է ստանան այն հարստությունն ու ունեցվածքը, որ նրանք կորցրել են, իսկ բոլոր որբերը պետք է ապահովվեն անհրաժեշտ խնամքով: Այդ ժողովրդին ամենից առաջ անհրաժեշտ է սեր, որից նա երկար ժամանակ զրկվել է եւ որի համար մեղավոր ենք բոլորս:

Պարոն նախագահ, հպարտությունը թույլ չի տալիս ինձ խնդրելու իմ ժողովրդի համար: Ես չեմ տարակուսում, որ նա, չնայած իր ցավին, զոհողության գնով, իր մեջ ուժ կգտնի մասնակից լինելու աշխարհի ապագայի փրկությանը: Սակայն հայ ազգին, որին սարսափելի վիրավորել են, ես ցանկանում եմ պաշտպան կանգնել, որովհետեւ եթե պատերազմից հետո էլ շարունակվեն նրա տառապանքները, նա ընդմիջտ կորսված կլինի:

Հասկանալով այդ ժողովրդի տանջահար հոգին, չսված

անհամար տառապանքները, մարդկային ջերմեռանդությամբ բարձրացնում եմ իմ ձայնը հանուն աղետյալների, որոնց հուսակտուր հեծեծանքները անկարող էի լսել, նրանց ահավոր մահի անգոր էի ողբալ, հանուն այն մարդկանց, որոնց ոսկորները ծածկում են Էփրատի անապատները, եւ կարծես մարմին առած՝ իմ սրտում են եւ կոչ են անում ինձ խոսել Ձեզ հետ:

Ես մի անգամ արդեն բախել եմ ամերիկյան ժողովրդի դուռը, երբ Կոստանդնուպոլսում Ձեր դեսպանատանը հանձնեցի տեղահանվածների նամակ-խնդրանքների Մեսքենեի եւ Հալեպի փախստականների ճամբարներից եւ զիտեմ, որ դա իզուր չէր: Ես ինձ հույսով չեմ օրորում՝ երբեւիցե ստանալու այդ նամակների պատասխանը, սակայն եթե Դուք, պարոն նախագահ, ճնշված ժողովուրդներին օգնություն ցույց տալու ազնվարարո գաղափարը իրականում դարձնեք Ձեր քաղաքականության հիմնական ուղղությունը, ապա կհամոզվեք, որ այդ հզոր ու միակ մարդկայնության ձայնը կլսվի բոլոր ժամանակներում:

Արմին Թ. Վեզներ

**ԷՐՆԱՍ ՎԵՐՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ 1915-1916
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՈՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Արդի թուրքական պատմագրության մեջ երևան են եկել մի շարք աշխատություններ, որոնցում նենգափոխվում է սուլթանական Թուրքիայի կառավարողների և երիտթուրքերի ղեկավարների կողմից մշակված հայ բնակչության ոչնչացման քաղաքականության էությունը: Թուրքական պատմական գրականության հրատարակությունների մի մասում հայկական կոտորածները բազատվում են օսմանյան կառավարության նկատմամբ հայերի ոչ չեզոք կեցվածքով, հեղափոխական շարժման հետ նրանց կապերով ու Բուսաստանին նրանց նվիրվածությամբ: Ավելին, երիտթուրքերի գաղափարախոսներից մեկը՝ Ջիյա Գյոթայպար, 1919 թ. մայիսին գինեփորական դատարանի առջև հայտարարեց. «Մի գրպարտեք մեր ազգը: Թուրքիայում հայերի կոտորածներ չեն եղել, այլ տեղի է ունեցել թուրք-հայկական փոխադարձ կոտորած»:¹

Թուրք պատմաբանների առանձին աշխատություններում փորձ է արվում արդարացնել հայերի ցեղասպանության քաղաքականությունը, մեղքը բարդելով հայերի վրա: Այդ հակազիտական, կեղծ կոնցեպցիայի մերկացմամբ վճռականորեն հանդես է գալիս գերմանացի ժամանակակից նշանավոր արևելագետ, Լայպցիգի համալսարանի բալկանագիտության բաժանմունքի վարիչ, պրոֆեսոր, դոկտոր

Էրնստ Վերները: 1973 թ. Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության պատմագիտական հանդեսում հրատարակվեց նրա «1915-1916 թվականների հայկական սարսափներն արդյո՞ք հայկական հնարանք են» հոդվածը,¹ որը վկայում է հայկական հարցի մասին հեղինակի քաջատեղյակությանը հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում:

Ավելի վաղ, նրա հոդվածները՝ հրատարակվել են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում:

Էրնստ Վերների նոր աշխատությունում բազմակողմանի և հավաստի փաստերի քննադատական վերլուծության հիման վրա բացահայտվում է երիտթուրքական կառավարության հայաջինջ, հանցավոր քաղաքականությունը և նրա իրականացումն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նշվում են երիտթուրքերի այն մարդատյաց գործողությունները, որոնք հանգեցրին արեւմտահայության ցեղասպանությանը:

Հեղինակը ցույց է տալիս, որ 1909 թ. կազմակերպված Կիլիկիայի հայության կոտորածները երիտթուրքերի համար փորձ հանդիսացան հայկական հարցի «վերջնական լուծման» համար: Հաստատվում է այն միտքը, որ փաստորեն երիտթուրքական կառավարությունը Թուրքիայում հայության լիակատար ոչնչացումը՝ համարում էր իր կարելիոր խնդիրը: Հայտնի է, որ Էնվեր փաշան Կոստանդնուպոլսի հասարակայնության ներկայացուցիչների առաջ հայտարարել էր, որ չի հանգստանա այնքան ժամանակ, քանի դեռ չի ոչնչացնի բոլոր հայերին: «Տեղահանության նպատակը, - մատնանշել էր նա, - ամբողջ հայ ժողովրդին արմատախիլ անելն է»:² Թայեաք փաշայի հայտնի հրամանագրերը վկայում են, որ

¹ Werner E. Die Armeniergreuel 1915/16-ein armenisches Greuelmärchen? "Zeitschrift für Geschichtswissenschaft", XXI, Jahrgang, 1973, Heft 2.

² Վերներ Է. Պանթյուրիզմը և ժամանակակից թուրքական պատմագրության մի քանի տենդենցները, «Լրաբեր հասարակական գիտությունների», No 6, 1966, Թուրքիան եռյակ միության և Անտանտի միջոցով 1914 թվականին. պատրանքներ և իրականություն Բուֆոնի տիեթին, «Լրաբեր հասարակական գիտությունների», No 7, 1970:

³ "Eingabe an den Reichstag. Der türkische Bundesgenosse Deutschlands". Berlin, 1932, S.5.

¹ "Welt des Islam", 1964, No 9, S. 297.

հայ բնակչության ցեղասպանությունը իրագործվում էր երիտրուրբական կառավարության նախապես կազմած ծրագրով:¹

Մեր օրերում միանգամայն տարօրինակ է, երբ հայերի ցեղասպանության անվիճելի փաստերի դեմ, որոնք «վաղուց ապացուցված են համաշխարհային հետազոտությամբ, այժմ վճռական բողոք է հայտարարում բուրք պատմաբան Սալահի Սոնիելը», - գրում է Է.Վերները: Կեղծելով իրական վիճակը, Ս.Սոնիելը կաշվից դուրս է գալիս, որպեսզի ցույց տա, թե արևմտահայության տեղահանությունը, արստրն ու ջարդերն իրր ռազմական անհրաժեշտություն էին եւ կատարվում էին հայ բնակչության մեղրով: Ս.Սոնիելը ստով ու կեղծիքով ձգտում է հերքել անառարկելի ճշմարտությունները:

Է.Վերներն իրավագիտրեն մատնանշում է, որ Ս.Սոնիելն իր պատճառարանման մեջ այնքան էլ ինքնատիպ չէ. «Իրանով էին փորձում արդարացնել իրենց երիտրուրբերի կենտկոմի եւ կառավարության անդամները 1918 թ. եւ հետո»:

Հայկական ջարդերի կազմակերպումն ու իրականացումը Ս.Սոնիելը համարում է «մոլորություն, հերյուրանք, չափազանցություն, չարամիտ հայկական պրոպագանդայի սարսափելի հերիաթ»:

Ընդհանրացնելով ու վերլուծելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արեւմտյան Հայաստանի ողբերգական իրադարձությունները, գերմանացի գիտնականը նշում է, որ հարկ չկա մեջբերելու սարսափների բազմաթիվ իրական պատկերներ, որոնք հավարվել եւ հրապարակվել են Յո.Լեպսիուսի եւ Արեւմտյան Հայաստանի ողբերգական դեպքերի մյուս ժամանակակիցների կողմից: «Իրանք վաղուց հայտնի են, - գրում է նա: - Ուշագրավ է, որ Սոնիելն իրեն հաշիվ չի տվել զոնն մի խոսքով հիշեցնելու դրանց մասին: Ամենայն հավանականությամբ նա այդ բանը համարում է բշնամական պրոպագանդա: Բոլոր դեպքերում, նրա կարծիքով **օսմանյան կառավարությունը**

պատասխանատվություն չի կրում այդ անկարգությունների համար...»:

Եւ այսպես, հայերի ցեղասպանության պատասխանատվության հարցը, որ շոշափում է Ս.Սոնիելը, «եւ որին փորձում է պատասխանել նրանով, որ պատասխանատվությունը կրում են մեծ տերությունները՝ Ռուսաստանը, Զրանսիան, Անգլիան եւ ոչ մի չափով բուրք ժողովուրդը...», լիովին կեղծ է: Ըստ Է.Վերների, Ս.Սոնիելը ելնում է այն սխալ երակետից, թե օսմանյան կառավարությունն ու բուրք ժողովուրդը մի միասնական ամբողջություն են: Խիստ քննադատելով այդ հակագիտական դրույթը, Է.Վերները մատնանշում է, որ Ս.Սոնիելը անտեսում է «կայսրության ժողովրդի» դասակարգային կառուցվածքը, չի նկատում, որ երիտրուրբական կուսակցության ծախու, անպատկառ եւ դաժան բռնապետությունը բնդհանուր ոչինչ չուներ անատոլիական գյուղացիների ու արհեստավորների զգացումների ու խոհերի, կարիքի եւ աղքատության հետ:

Հոդվածագիրը մատնանշում է նաեւ կայերական Գերմանիայի մեղսակցությունը հայ բնակչության ցեղասպանության հարցում, քննադատում է արեւմտյան իմպերիալիստական մյուս տերությունների հանցավոր քաղաքականությունը հայերի մեծազույն ողբերգության նկատմամբ:

Է.Վերները, հենվելով ճշմարտացի փաստերի վրա, բացահայտում է Ս.Սոնիելի հակագիտական կոնցեպցիայի սնանկությունը, փաստերով ապացուցում, որ ժամանակակից բուրք պատմաբանը պատմության կեղծարար է:

¹ "Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang". Berlin, 1921, S. 133.

ԷՐՆՍՏ ՎԵՐՆԵՐ

1915-1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐՆ ԱՐԴՅՈ՞Ր ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔ ԵՆ

Այն բանից հետո, երբ Յոհաննես Լեպսիուսը¹ մերկայացրեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անատոլիայում հայ բնակչության տեղահանությունն ու ցեղասպանությունը, ի հայտ եկան մեծ թվով ուրիշ ականատեսների վկայություններ ու փաստաթղթեր, որոնք հաստատում ու ճշգրտում են սարսափելի փաստերը: Երիտրոսրբերը իրադրությունը ներկայացնում էին այնպես, որ իրր հայկական ապստամբությունների, լրտեսության ու ննգադուլի պատճառով նրանք հարկադրված էին դիմելու եռանդուն միջոցների: 1916 թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոնգրեսում հայտարարվեց, որ իրր շատ հայեր, որոնց մեջ կային ևս պատգամավորներ, անցել են ռուսների կողմը: Ելչվում էր, որ դաշնակցականների բուրժուանացիոնալիստական կոմիտեն գործում էր թուրքական բանակի թիկունքում, հարձակվում գեներլ պահեստների վրա, ծեծում աստիճանավորներին, սպանում ու թալանում մահմեդականներին: Այդ պատճառով կառավարությունը

¹ Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam 1919.

ձեռնամուխ է եղել «ռազմական գոտուց բոլոր հայերի տեղահանմանը»:¹ «Տեղահանության» պատասխանատու գլխավոր դեմքը՝ օսմանյան ներքին գործերի նախարար Մեհմետ Թալեար բեյը, 1918 թվականին իր հրաժարականից առաջ ծովային նախարար Ռաուֆ Օրբեյին ասել է. «Երբ հայերը միացան մեր բշնամուն, կարելի² էր արդյոք դիմել այլ միջոցի, քան ռազմական գոտուց նրանց տեղահանմանը: Իհարկե, դա հեշտ գործ չէր: Այդ իսկ պատճառով դրա իրագործման ընթացքում դաժանություններ կիրառվեցին: Այժմ ևս խոր ցավ եմ գգում, որ չկարողացա բնդդիմանալ ապստամբությունների գոտուց դուրս տեղի ունեցած հաշվեհարդարներին»:³ Պանրորրիզմի զաղափարախոս Չիյա Գյորալպր. որ «Միություն և առաջադիմություն» կառավարող կուսակցության Կենտրոնական Կոմիտեի կազմում էր, 1919 թվականի մայիսի 13-ին և 17-ին զինվորական դատարանի առջեւ նախագահ Նազիմ փաշային հայտարարել էր. «Մի գրպարտեք մեր ազգը: Թուրքիայում հայերի կոտորածներ չեն եղել, այլ տեղի է ունեցել թուրք-հայկական փոխադարձ կոտորած: Նրանք թիկունքից հարձակվեցին մեր վրա, մենք հակահարված տվեցինք»:⁴

Այդ վարկածը ժամանակակից բուրքական պատմագրության մեջ բարձրացված է պաշտոնական տեսակետի աստիճանի: Ըստ որում, հենվում են Վանում բուրքական ահարեկման դեմ հայերի ապստամբությունների, 1914 թ. առաջ Ռուսաստանի հետ ունեցած նրանց կապերի, ինչպես նաև Փարիզում և Լոնդոնում հայկական վտարանդիների տրամադրությունների վրա: 1914-1915 թթ. ձմռանը Սարիղամիշի մոտ բուրքական կովկասյան բանակի պարտության մեղավոր էին ճանաչում ոչ թե ռազմական նախարար Էնվեր փաշային, որն իր զինվորական դիլետանտության պատճառով տասնյակ հազարավոր զինվորների անխուսափելի ոչնչացման դատապարտեց, այլ

¹ "Die europäischen Mächte und die Türkei Während des Weltkrieges. Die Aufteilung der asiatischen Türkei. Unter Red. von E. Adamov, Dresden, 1932, No 195, S. 160.

² Ferudin Kandemir, Yaku Tarihimiz (Unsere jüngste Geschichte), t.I, Istanbul, 1962, S. 81.

³ Ebenda, t. II, S. 340. Zitert nach G. Jäschke in einer Rezension in der "Welt des Islam", IX, 1964, S. 297.

ամեն ինչ հայերի վրա էին բարդում:¹ Այդ վարկածի դեմ, դեռևս 1928 թ. հանդես եկավ Թուրքիայում ավստրիական նախկին կցորդ Ի. Պոմիանկովսկին: Կոստանդնուպոլսում իր ծառայության ժամանակ երիտրորքերի նշանավոր ներկայացուցիչները նրա մոտ ավստասեր էին հայտնում, մատնացույց անելով, որ բուրբակյան սուլթանները բրիտանացիների նկատմամբ իրր չափից ավելի մարդասեր են եղել: Նրանք (սուլթանները -Ս.Ս.) նվաճված մարզերի բոլոր բնակիչներին պետք է ստիպեին ընդունել մահմեդականություն կամ ոչնչացնել: Պոմիանկովսկին ընդգծում է, որ դեռևս մինչև 1914 թվականը երիտրորքական կառավարությունը որոշել էր օգտագործել յուրաքանչյուր պատեհ առիթ հայերին ապսպալում ոչնչացնելու համար:²

Միաժամանակ նա հաստատում էր դեռևս Յո.Լեպսիուսի կողմից առաջ քաշված այն կարծիքը, որ Վիլհելմշտրասեն (կայզերական Գերմանիայի կառավարությունը -Ս.Ս.) նույն նպատակն էր հետապնդում: Դուանը (Թուրքիայում -Ս.Ս.) գերմանական դեսպան Բարոն ֆոն Վանզենհայմը դեռևս Սարաևոյի սպանությունից առաջ բազմիցս հայտարարել է կայզերական կառավարությանը, որ ինքր Արևմտյան Հայաստանում բարեփոխությունների վերաբերյալ մեծ տերությունների գործողությունները դիտում է որպես անհուսալի գործ: Հայերը պետք է ընդունեն մահմեդականություն, այդ դեպքում նրանց հանգիստ կթողնեն,³-ասել է Հ.Վանզենհայմը: Փաստերի խոր ուսումնասիրության հիման վրա կայզերական Գերմանիայի քաղաքականության նկատմամբ հետեյալ կարծիքն է հայտնել Ա.Ս.Ավետյանը: Նա նշել է, որ Ռեյխի (կայզերական Գերմանիայի -Ս.Ս.) կառավարողներն արդեն ռազմավարական նկատառումներով շահագրգռված էին հայերի տեղահանման, մահմեդականացման, իսկ հարկ եղած դեպքում՝ նրանց ոչնչացման մեջ:⁴ Երբ գերմանական քաղաքագետները

երբեմն եւ նույնիսկ դժգոհություն էին հայտնում այնպիսի հուզավառ, խելացնոր եւ բախտախնդիր մարդուց, ինչպիսին Էնվեր փաշան էր, ապա վերջին հաշվով նրանց նպատակը նույնն էր:

Հնարավոր է, 1915-1916 թվականների տեղահանությունն ու ցարդերը Վանզենհայմի եւ նրա բեռլինյան լիագործների համար անպատեհ էին,- գրում է Ու.Տրումպենը,- սակայն սկզբունքորեն ոչ որ դեմ չէր դրանց: Նրանք ձգտում էին այն բանին, որ հասարակայնությունը հնարավորին չափ բիչ իմանար այդ մասին:¹

Դիչտ Լ, ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաունը նույնպես որեւէ բան չձեռնարկեց, որն ինչ-որ չափով կրեքեւացներ դժբախտների ճակատագիրը, իսկ նախագահ Վիլսոնը Դուան հետ հարաբերությունները չխզեց, այլ միայն կոկորդիլոսյան արցունքներ քափեց:² Իմպերիալիստական պետությունների համար հայերը շախմատային սախտակի վրա միայն զինվորներ էին, որոնց անհրաժեշտության դեպքում շարժում էին այնպես, ինչպես այքր չթարթելով՝ մարտադաշտում մարդկանց զանգվածաբար կոտորում էին:

1908 թ. հեղափոխության հաղթանակից հետո երիտրորքերը հայտարարեցին, որ ի տարբերություն օսմանյան լիբերալների, նրանք ձգտում են ստեղծել կենտրոնացված պետություն: Սակայն ցենտրալիզմը նրանց համար հավասարազոր էր սյանբորքիզմին:³ Նույնիսկ այրանագիները, որոնք զգալիորեն նպաստեցին հեղափոխության հաղթանակին, եռանդագին հակադրվեցին այդ քաղաքականությանը: Պանիսլամիզմը դարձավ պանբորքիզմի հակառակ երեսը: Էկրեմ բեյ Վլորան այդ կապակցությամբ 1911 թ. գրել է. «Մենք ոչ միայն մտածում ենք, որ այժմ Բալկանյան թերակղզում կրոնական հիմքի վրա ապագայնացման քաղաքականություն վարելը չափից ավելի ուշ է, այլև գտնում ենք, որ այդ փորձը,

¹ Лудпувейт Е., Турция в годы первой мировой войны. М., 1966, стр. 64-67.

² Pomiankowski J. Der Zusammenbruch des Osmanischen Reiches. Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges. Zürich (Leipzig), Wien, 1928. S. 162.

³ Ebenda, S. 163.

⁴ Аветисян А. Германский империализм на Ближнем Востоке. М., 1966, стр.36, 45.

¹ Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918. Princeton, New Jersey, 1968. S. 204.

² Ebenda, S. 269 f.

³ Vgl. E. Werner, Wesen und Formen des türkischen Nationalismus, in ZfG, 1968, H.10.

որը ներկայիս կառավարությանը բազմախոստումնալից է թվում, ծայր աստիճան անհաջող է պետության ամբողջականության պահպանման համար»:¹ Եթե Բալկաններում երիտթուրքական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն պետք է գործեր զգույշ, ապա Անատոլիայում սանձերն արձակել էր: 1909 թ. հրահրված փողոցային խուժանը մորթեց հազարավոր հայերի, այսպես կոչված Կիլիկիական Վեսպերում:² Ըստ որում կառավարությունը ճարակորեն օգտագործեց բուրք աղբատ գյուղացիների ու արհեստավորների դասակարգային ասելությունը, որոնք, հանձինս հայ վաճառականների եւ վաշխատունների, տեսնում էին իրենց թրխատունական արյունախումբներին: Երիտթուրքերը Կիլիկիայի միջադեպը դիտում էին որպես փորձ, քննություն հայկական հարցի «վերջնական լուծման» համար: Այնուհետև համաշխարհային պատերազմը դրա իրականացման համար նրանց հնարավորություն տվեց, որով եւ խնդիր էր դրվում, որպեսզի Անատոլիան՝ կայսրության սիրտը, մարքվի բոլոր տեսակի «ոչ թուրքական եւ ոչ մահմեդական» տարրերից:³ Ավելի քան մեկ միլիոն հայություն ցեղասպանության զոհ դարձավ:

Վաղուց, համաշխարհային հետազոտությանը ապացուցված այդ փաստերի դեմ ներկայումս իր վճռական բողոքն է հայտնում բուրք պատմաբան Մալահի Սոնիելը: Թուրքերեն ու անգլերեն հրապարակված հոդվածում Ֆորին Օֆիսի արխիվից բաղված նոր տվյալների հիման վրա նա փորձում է նոր ձևով լուսարանել փաստերը եւ իրր ընդհանրացնել պրոպեգանդային կողմերի արդարացի լուծումը:⁴

¹ Bartl P. Die albanischen Muslime zur Zeit der nationalen Unabhängigkeitsbewegung (1878 bis 1912), Albanische Forschungen, 8, Wiesbaden, 1968, S. 161.

² Mandelstam A. Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917 S. 203-206.

³ Vgl. dazu N. Deyrmenjian. An important Turkish Document on the "Exterminate Armenians" Plan in Armenian Review 1961, S. 53-55; Haigaz K. Kazarian, Minutes of Secret Meetings Organizing the Turkish Genocide of Armenians, in: ebenda, 18, 1965, S. 18-40.

⁴ Salahi R. Sonyei, Yeni belgelerin isigi altinda Ermeni tehcirleri Armenian Deportations: Areappraisal in the light of new documents, Belleten C. XXXVI, No141, Ankara, 1972, S. 31-49 (türkische Fassung), S. 51-69 (engl. Übersetzung), dazu Photokopien von 16 gedrückten und ungedrückten Aktenstücken.

Սկզբում նա խստորեն հանդես է գալիս Ա.Օ.Մարգարյանի հոդվածի՝ դեմ, որի մեջ հեղինակը թուրքական միջոցները (հայ բնակչության ոչնչացման -Ս.Ս.) համեմատում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆաշիստների կազմակերպած մահվան ճամբարների հետ: Այնուհետև Ս.Սոնիելը տարակուսանք է հայտնում տպանվածների մեծ թվի հարցում: Անվստահելի համարելով օսմանյան վիճակագիրներին, նա տվյալներ է բերում ֆրանսիական ու անգլիական հյուպատոսություններից, որոնց համաձայն 1900-1914 թթ. ընկած ժամանակամիջոցում կայսրությունում հայերի քիվր հաշվվում էր 1.300.000, որից մոտ 913.875-ը բնակվում էր Անատոլիայում եւ կազմում էր ամբողջ բնակչության 15 տոկոսը: Թուրքական տվյալներով, 1915-1916 թթ. տեղահանության ժամանակ զոհվել է 200.000-300.000 մարդ: Ֆրանսիական աղբյուրները 1920 թ. ցույց էին տալիս կես միլիոն սպանված:

Ինչ վերաբերում է քվերին, ապա դրանք թող իրենք խոսեն: Չոհվածների քիվր պետք է ավելի շատ լինի, քանի որ տեղի հայ բնակչությունը ավելի բազմաքանակ էր: Դա առաջնակարգ նշանակություն ունի ինչպես Մարգարյանի, այնպես էլ նրա ընդդիմախոսի՝ Սոնիելի համար: Այն դեպքում, երբ առաջինը մերկացնում է կառավարության կողմից նախօրոք պլանավորված տեղահանությունը (դեպորտացիան -Ս.Ս.), Սոնիելը փորձում է տեղահանությունն ու արսորը հրամցնել որպես ռազմական անհիամեշտություն, որն իրր իրական էր դարձել հայերի մեղքով:

Իր պատճառաբանության մեջ, ինչպես տեսնում ենք, նա այնքան էլ ինքնատիպ չէ: Դրանով էին փորձում արդարացնել իրենց երիտթուրքական կենտկոմի եւ կառավարության անդամները 1918 թ. եւ հետո: Անկասկած է, անցնելով իշխանության զլուխ, «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունը զբաղվում էր (Հայկական -Ս.Ս.) հարցի «վերջնական լուծմամբ», որի իմաստն էր «մահմեդականացում, թուրքացում կամ մահ»:²

¹ In: History of the First World War, vol. 3, 1970.

² Гасанова Э. Исология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914 гг.), Баку, 1966, стр. 45.

Ընդհանուր հետաքրքրության է արժանի 1915 թ. ապրիլի 28-ին Այնթապի մյուսեասարիֆին վալի Ջելալի զաղտնի հրամանը: Ծածկագրված հեռագիրը հետեւյալ բովանդակությունն ուներ. «Սույնով ուղարկում ենք ծածկագիր հաղորդումը, որը ստացվել է ներքին գործերի նախարարից: Խնդրում եմ անհապաղ արգելել հնչակների եւ դաշնակցական կոմիտեների բոլոր մասնաճյուղերի գործունեությունը: Կալանավորեք վտանգավոր, վնասակար ու ակտիվ բոլոր անդամներին, խուզարկեք նրանց բնակարանները եւ հաղորդեք ինձ այնտեղ գտնված փաստաթղթերի մասին: Քանի որ անհրաժեշտ է սույն հրամանի հիմնավոր կատարումը, խորհուրդ եմ տալիս Ձեզ, գործողություններից առաջ նախապատրաստել բավականին զինված ուժեր, որպեսզի կարողանաք դիմակայել հնարավոր դիմադրությանը»: Հեռագրին կցված էր վալիի հավելվածը, որն ամենայն հավանականությամբ կազմված էր Թալեաթի կողմից եւ ուղարկված էր բոլոր նահանգապետերին: Նրանում տրված էր դրակոնյան միջոցների հիմնավորումը: Դաշնակցականների եւ նրանց կողմնակիցների բոլոր տեսակի գործողությունների թվարկումից հետո հետեւում էին կառավարության կողմից նախատեսված հակամիջոցները. «Հնչակների, դաշնակցականների մասնաճյուղերը եւ վիլայեթներում գործող նման կոմիտեները մի հարվածով պետք է փակվեն: Այդ մասնաճյուղերում գտնված բոլոր փաստաթղթերը, մինչեւ դրանց ոչնչացման հնարավորության առկա դառնալը պետք է ոչնչացվեն... բռնագրավված բոլոր փաստաթղթերը պետք է ստուգվեն, իսկ խլված նյութերի հիման վրա կալանավորված անձինք պետք է կանգնեն զինվորական դատարանի առջեւ... Քանի որ այդ հրամանը վերաբերում է միայն կոմիտեների ազդեցության տարածման դեմ ուղղված միջոցառումներին, դուք պետք է խուսափեք դրա իրականացումից այն ձևով, որը կհանգեցնեք մահմեդականների ու հայերի միջեւ փոխադարձ ջարդերի»:

Սոնիելն այդ հրամանից անում է երեք հետեւություն.

1. Օսմանյան կառավարությունը միջոցներ էր ձեռնարկել միայն հայ ազգայնականների դեմ:

2. Կալանավորման եւ տեղահանման էին ենթարկվում

միայն ակտիվ ազգայնականները:

3. Ներքին գործերի նախարարը կտրականապես արգելել էր կոտորածները: Որպես վկաներ նա բերում է Ֆորին Օֆիսի բարձրաստիճան ծառայողներին, որոնք 1920 թվականին, մեկնաբանելով մեջբերված վերոհիշյալ փաստաթուղթը, արդարացնում էին օսմանյան կառավարությանը կամ իրենց տարակուսանքն էին արտահայտում զանգվածային ոչնչացման նկատմամբ: Չարագործությունները, որոնց չէր կարող խոչընդոտել ուղեկցող թույլ պահակախումբը, կատարվում էին քրդերի եւ առանձին ավազակային խմբերի կողմից:

Մի խոսքով (մատնանշում է Սոնիելը -Ս.Ս.), քյուրիմացություն, հերյուրանք, չափազանցություն, չարամիտ հայկական պրոպագանդայի սարսափելի հերիաք: Մակայն գոյություն ունեն լիակատար վստահություն ներշնչող վկայություններ, այն ակնատեսների, որոնք տեղում դիտել են, քե ինչպիսին է եղել կալանքի ու տեղահանության իրողությունը եւ ի՞նչ չափով է այն նախատեսվել միայն դաշնակցականների ու հնչակների համար:

Այսպես, ավստրիական կաթոլիկ քահանա Հոֆերը, որն ապրել է Էրզրումի կաթոլիկական կոնվենտում, հետեւյալ ձևով է բնութագրում տեղահանության մասին հրամանագրի իրագործումը. «Դեկրետը նախատեսում է մահապատիժ մեղավորներին կամ կասկածելիներին եւ արքայը՝ մնացած բոլորին: «Տեղահանություն» (դեպորտացիա) բառը նշանակում է.

1. Տղամարդկանց բաժանել կանանցից, մայրերին՝ իրենց երեխաներից:

2. Թուրքական լիազորների սպառնալիքներ ու շողորթոթություն, որպեսզի դավաճանության մղեն այս կամ այն մարդկանց: Կոլեկտիվներից ու ընտանիքներից անջատվածները, իսկ նրանք շատ էին, անմիջապես ուղարկվում էին զուտ մահմեդական մարզեր, որտեղից այլեւս վերադարձ չկար:

3. Մարմնական կեցվածքով հարմար կանանց առևուճազում էին՝ հարեմներին վաճառելու կամ աստիճանավորների ու պահակախմբերի ստոր տոփանքի բավարարման համար:

4. Տարբեր մարզերից վերցված փոքր աղջիկները նախատեսվում էին որպես սպասուհիներ բուրքական տներում, որոնց պետք է տրվեր համապատասխան մահմեդական կրթություն: Մյուս տեղերում բոլոր քրիստոնյա պատանիները յուլատման էին ենթարկվում եւ բաժանվում բուրքական տների վրա:

5. Կային տեղեր, որտեղ այն ժամանակ (1915 -Է.Վ.) կոպող հայ գինվորների կանայք ու դուստրերը...հավաքվում ու բաժանվում էին բացառապես բուրքական գյուղերի վրա, դա տեղի էր ունենում Իզմիրում...

Քանի որ ընտրությունն այդ ձեռով էր կատարվում, ապա մնացածներին ստիպում էին բողոքել ամբողջ ունեցվածքը՝ տունը, գույքը, դրամը եւ շարժվել երկրի խորքերը: Նրանք ուղեկցվում էին մեծամասնությամբ դաժան ոստիկանների կողմից եւ թափառում էին անորոշ ուղղություններով, գյուղից-գյուղ, հարքավայրից-հարքավայր, առանց դադարի ու հանգստի»:¹

Անկարայից մի բողոքական քահանա հաղորդում էր, որ այնտեղ կոտորածների ժամանակ ոչնչացվեցին տաս տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ:²

Հարկ չկա բերելու սարսափների բազմաթիվ իրական պատկերներ, որոնք 1919 թվականին հավաքվեցին ու հրապարակվեցին Յո.Լեպսիուսի կողմից: Դրանք վաղուց հայտնի են: Ուշագրավ է, որ Սոնիելը իրեն հաշիվ չի տվել զոհն մի խոսքով հիշեցնելու դրանց մասին: Ամենայն հավանականությամբ, նա այդ բանը համարում է թշնամական պրոպագանդա: Բոլոր դեպքերում, նրա կարծիքով օսմանյան կառավարությունը պատասխանատվություն չի կրում այդ միջադեպերի համար, եւ հազիվ թե նա որեւէ ճշգրիտ տվյալ ունենար դրանց մասին: Իհարկե, նա լռությամբ շրջանցում է նաեւ 1916 թ. հունիսի 30-ին կոմս Վոլֆ Մետերնիխի՝ ռեյսկանցյուր Բեքման Հովվեզին ուղարկած զեկույցը, որի մեջ ասվում է, որ Կոստանդնուպոլսում իշխանություն ունի միայն Մերկեզի Ումումին, եւ, որ ոչ ոք ի վիճակի չէ «սանձահարել

շովինիզմն ու մոլեռանդությունը: Կոմիտեն պահանջում է ոչնչացնել հայերի վերջին մնացորդները եւ կառավարությունը պետք է զիջի...Կոմիտեն ազդեցություն ունի բոլոր վիլայեթներում: Աջակցության եւ վերահսկողության համար յուրաքանչյուր վալիին, ընդհուպ գայմագամին կցված էր կոմիտեի մեկ անդամ»:¹ Մակայն 1915 թվականին Կենտկոմի ոչ ամբողջական կազմն էր պաշտպանում «վերջնական լուծումը»: Նախկին անդամներից մեկը՝ Միդհատ Շյուքրյուն պատերազմից հետո հայտնում էր. «Մերկեզի Ումումին («Միություն եւ առաջադիմություն» երիտբուրքական կուսակցության կենտրոնական վարչությունը -Ս.Ս.) որոշել էր ռազմական գոտուն մոտ ընկած սահմաններից կասկածելի առանձին հայերի արտաքսել քիկունք: Դոկտոր Բեհաեդդին Շարիրը (Էնվեր փաշայի փստահված անձը -Է.Վ.) այդ միջոցառումը վերածեց համընդհանուր տեղահանման, որի իրականացմանը մեր կենտկոմը ամենեւին էլ հսկանություն չէր տալիս»:²

Թալեարի եւ Էնվերի կողմից գլխավորվող արմատական քեր հաղթող դուրս եկավ եւ մի ամբողջ ժողովրդի կործանման դատապարտեց: Դրանով նա իր շովինիստական տեսությունը իրականության վերածեց, ըստ որում, հայերի ոչնչացումը միայն սկիզբն էր, որին հնարավոր կարճ ժամանակամիջոցում պետք է հետեւեր Փոքր Ասիայում ապրող հույների ոչնչացումը: «Արիկայախումբն անհամբերությամբ պատրաստվում էր մի պահի, երբ Անտանտի կողմից դրված Հունաստանը հանդես կգա Թուրքիայի եւ նրա դաշնակիցների դեմ: Այդ ժամանակ ջարդերն ավելի հսկայական կլինեին, քան հայերինը: Ավելի շատ զոհեր՝ գայթակղիչ ավար...բուրքացնել՝ նշանակում է տեղահանել կամ սպանել, ոչնչացնել եւ բռնի կերպով յուրացնել ունեցվածքը»:³

¹ Lepsius J. Nr. 282. S. 277.

² Ferudin Kandemir. t. II. S. 339.

³ Վոլֆ Մետերնիխի հաղորդումների համաձայն, արդեն 1914 թվականի հունիսին Թրակիայում եւ Փոքր Ասիայում սկսվել էին հույների տեղահանություններն ու սպանությունները: Իզմիրում բրիտանական գլխավոր հյուպատոսը մատնանշում էր 90.000 հունական փախստականների մասին, որոնք պաշտպանություն էին փնտրում Մալմեիկի եւ Պիրենյան կղզիներում: Գերմանական ծովակալ Ուզեդունը ամերիկյան դեսպան

¹ Haus-, Hof- und Staatsarchiv Wien, XII, 404 PA, Türkei, XLVII/4, fol. 17-19.

² Ebenda, fol. 19.

Մեղսակցության հարցը, որ շոշափում է Սոնիելը իր հողվածի վերջում և որին փորձում է պատասխանել նրանով, որ պատասխանատվությունը կրում են մեծ տերությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և ոչ մի չափով բուրք ժողովուրդը, ելնում է այն սխալ ելակետից, թե օսմանյան կառավարությունն ու բուրք ժողովուրդը մի միասնական ամբողջություն են հանդիսանում: Նա աչքաթող է անում «կայսրության ժողովրդի» դասակարգային կառուցվածքը, չի նկատում, որ երիտրորքական կուսակցության ծախու, անպատկառ և դաժան բռնապետությունը ընդհանուր ոչինչ չունեն անատոլիական գյուղացիների զգացումների ու շահերի, կարիքի և աղքատության հետ, որոնց, պատերազմի մեջ մտնելով, նա և նրարկել էր չսված աղքատության, որպեսզի իրականացնել իր փառամոլ, ցնորական նպատակները և միաժամանակ հաղթահարել ներքին ճգնաժամը: Քայրայված ֆեոդալական ազնվականությունը, բարձրագույն հոգևորականությունը և սպայական անձնակազմի մեծ մասը «Մյուրյուն և առաջադիմության» օգնությամբ հույս ունեին հաստատել իրենց տիրապետությունը և միաժամանակ դուրս պրծնել իմպերիալիստական պետությունների մեռելային ճանկերից: Ի վերջո դա հանգեցրեց պետության լիակատար սնանկությանն ու քայքայմանը, որի պատճառով անտեղի գոհվեցին միլիոնավոր մարդ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հայոց ցեղասպանության ականատես, գերմանացի մեծ մարդասեր Արմին Վեգները և նրա բաց նամակը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին. 5
- Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ պարոն Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին անապատ տեղահանելու մասին. 22
- Էրնստ Վերների աշխատությունը 1915-1916 թվականների հայկական սարսափների մասին. 32
- Էրնստ Վերներ. 1915-1916 թվականների հայկական սարսափներն արդյո՞ք հայկական հնարանք են. 36

Մորզենբաուի, հետ ունեցած գաղտնի գրույցի ժամանակ բերանից բոցրել էր այն, որ զանգվածային տեղահանությունները համապատասխանում են թիկունքը ամրապնդելու կայզերական կառավարության պլաններին (vgl. Chr. Teodoulou, *Greece and the Entente. August 1, 1914-September 25, 1916. Thessaloniki 1971, S. 5 f.*).

Armin Wegner and Ernst Werner on the Armenian Genocide

*Center for the Study of Nationalities Problem and Genocide
Yerevan, 1996*

The booklet presents great German humanist Armin Wegner's "Open letter to the US President Woodrow Wilson about the displacement of the Armenian people to the deserts", and University of Leipzig professor Ernst Werner's study "Are the Armenian Horrors of 1915-1916 an Armenian invention?", both of which are published in full text for the first time in Armenian. Intended for specialists and wide readership.

Армин Вегнер и Эрнст Вернер об Армянском Геноциде

*Центр по Изучению Национальных Вопросы и Геноцида
Ереван, 1996*

Буклет представляет Открытое письмо великого германского гуманиста Армина Вегнера президенту США Вудро Вильсону об переселении армян в пустыню и работу профессора Лейпцигского университета Эрнста Вернера "Действительно ли армянские кошмары 1915-1916 годов являются армянским вымыслом?", которые на армянском языке полностью предлагаются впервые.

Рекомендуется специалистам и широкому кругу читателей.

Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոնը հիմնադրվել է Երևանում: Այն ոչ կառավարական հասարակական կազմակերպություն է, որը զրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 1993 թվականին:

Կենտրոնի նպատակն է, համադրելով մասնագետների ջանքերը, ներդրում կատարել ազգային հարցի եւ գենոցիդի համակարգված ուսումնասիրության բնագավառում, վեր հանել այդ խնդիրներին առնչվող բազմաթիվ հիմնահարցերը եւ ծավալել գիտահետազոտական գործունեություն ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Կենտրոնն առաջնորդվում է այն հիմնադրույթով, որ ազգային և հարակից հարցերը մարդկային համակեցության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից են և առնչվում են այնպիսի հանրահայտ սկզբունքներին, ինչպիսիք են ազգերի ինքնորոշումը, մարդու և փոքրամասնությունների իրավունքները: